«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1

«22» օգոստոսի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. 2024-2025 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի ընտրություն և կազմի հաստատում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

3. 2023-2024 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

4. 3-րդ, 6-րդ և 8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի վերաբերյալ հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

5. 2024-2025 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ժամաբաշխման քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

6. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

7. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

8. Բնագիտամաթեմատիկական առարկաներից տրվող գրավոր աշխատանքների, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

9. Ըստ նոր ՀՊՉ-ների 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

10. Աշակերտների ընդգրկվածություն երկարօրյա խմբերում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

11. 2024-2025 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

12. Բնագիտամաթեմատիկական առարկաների մասնախմբերում ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

13. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման մասնախմբի դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2024-2025 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի ընտրության և կազմի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողն առաջարկեց փոփոխություն չկատարել և բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ թողնել Անուշ Դաջունցին: Զեկուցողը նշեց, որ բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված են «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Հայաստանի Աշխարհագրություն», «Բնություն», «ԹԳՀԳ», «Ինֆորմատիկա», «Տեխնոլոգիա», «Շախմատ» առարկաները դասավանդող ուսուցիչները:

Արտահայտվեցին՝ Ա. Մարտիրոսյանը, Մ. Բաբայանը:

Հաշվի առնելով նախորդ տարում կատարած աշխատանքները արտահայտվողներն առաջարկեցին 2024-2025 ուսումնական տարում բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահին՝ Անուշ Դաջունցին, թողնել անփոփոխ:

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ ընտրել Անուշ Դաջունցին և հաստատել մեթոդմիավորման կազմը՝ ընդգրկելով «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Հայաստանի Աշխարհագրություն», «Բնություն», «ԹԳՀԳ», «Ինֆորմատիկա», «Տեխնոլոգիա», «Շախմատ» առարկաները դասավանդող ուսուցիչներին:

Լսեցին 3. 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կատարած աշխատանքների ամփոփման և նոր ուսումնական տարվա անելիքների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ամփոփ ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարում բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կատարած աշխատանքները և նոր՝ 2024-2025 ուսումնական տարում մեթոդմիավորման անելիքները: Քննարկվեցին թույլ տված թերացումները շտկելու և աշխատանքն ավելի արդյունավետ կազմակերպելու ուղղությունները: Քննարկվեցին նաև նոր ուսումնական տարում սպասվող փոփոխությունների և անելիքների շուրջ իրականացվելիք աշխատանքների մասին հարցեր:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Հ. Ալավերդյանը:

Արտահայտվողները նշեցին, որ բնագիտամաթեմատիկական առարկաների մ/մ նախագահի հաշվետվությունը ընդունելով որպես հիմք, 2023-2024 ուսումնական տարում մեթոդմիավորման կազմի ուսուցիչների կատարած աշխատանքները գնահատել լավ:

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2023-2024 ուսումնական տարվա կատարողականը ընդունել ի գիտություն:

Լսեցին 4. 3-րդ, 6-րդ և 8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ս.Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024-2025 ուսումնական տարում 3-րդ, 6-րդ և 8-րդ դասարաններում ուսուցումը կիրականացվի նոր ՀՊՉ-ներով: Այդ դասարաններում ուսուցումը պետք է իրականացվի նոր դասագրքերով, անհրաժեշտ է ծանոթանալ, ուսումնասիրել այդ դասագրքերը, երաշխավորված նոր ծրագրերը և ըստ դրա կազմել օրացուցային-թեմատիկ պլանները և աշխատանքները կազմակերպել դրան համապատասխան:

Արտահայտվեցին՝ Մեթոդմիավորման անդամները:

Արտահայտվողները կարևորեցին նախորդ ուսումնական տարվա փորձը՝ կապված նոր ՀՊՉ-ների ներդրման գործընթացի իրականացման հետ՝ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում, շեշտելով, որ անհրաժեշտ է ունեցած փորձն օգտագործել նաև 2024-2025 ուսումնական տարում, հաշվի առնելով նաև գնահատման նոր սկզբունքների փորձը: Արտահայտվողները խոսեցին նաև նոր դասագրքերի մասին, նշեցին, որ սահմանված ժամկետում դրանք պատվիրվել են և հույս հայտնեցին, որ ուսումնական տարվա մեկնարկին արդեն իսկ կլինեն դասագրքերը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 3-րդ, 6-րդ և 8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի մասին քննարկման արդյունքները:

Լսեցին 5. 2024-2025 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա վերջին 11-րդ նիստում ներկայացվել և քննարկվել է բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների նախնական ժամաբաժանումը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ս. Բաղդասարյանը, Կ. Արզումանյանը:

Նրանք կարևորեցին, ինչպես նախորդ տարում այս տարի ևս 9-րդ դասարանի 2-րդ կիսամյակում հանրահաշիվ առարկային 4 ժամ տրամադրելը:

Ս. Ավանեսյանը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ուսումնական պլանը, հատկապես նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում: Նա առաջարկեց դպրոցական բաղադրիչից տրամադրել հետևյալ առարկաներին:

- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1

դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա»առարկային՝ 1 դասաժամ:

- 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ:
- 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ:
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ:
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ:
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ:
- 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ:
- 9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հանրահաշիվ» առարկային՝ 0.5 դասաժամ:

Սերգեյ Ավանեսյանն առաջարկեց նաև 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 2-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 8 դասաժամ (4 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ:
- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ:
- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
    - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (1 կիսամյակի համար):
    - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ:

- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
    - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (1 կիսամյակի համար) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (2 կիսամյակի համար)։
    - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Որոշեցին՝

1. Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների ժամաբաժանումը (կցվում է)։
2. Դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
    - 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա»առարկային՝ 1 դասաժամ։
    - 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ։
    - 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ։
    - 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
    - 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
    - 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
    - 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
    - 9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հանրահաշիվ» առարկային՝ 0.5 դասաժամ։
3. Անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
    - 2-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
    - 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
    - 5-րդ դասարանում շաբաթական 8 դասաժամ (4 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական)

բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ։

- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ։
- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (1 կիսամյակի համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (1 կիսամյակի համար) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (2 կիսամյակի համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Լսեցին 6. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանում ներկայացված հիմնական կետերը, անելիքները։ Նա նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են առարկայական չափորոշիչներին, ծրագրերին համապատասխան նոր ՀՊՉ-ներով անցնող դասարաններում հաշվի են առնված գնահատման առանձնահատկությունները։ Արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները նույնպես կազմվել են ուսուցիչների կողմից, որոնց համար հիմք են հանդիսացել դրանց ծրագրերը, իսկ արտադիր խմբակների՝ «Առողջ ապրելակերպ», «Նորարարական ջերմատուն», «Մասնագիտական կողմնորոշում», ծրագրերը կազմված են նախարարության կողմից։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Զեյնալյանը, Հ. Ալավերդյանը։

Ս. Ավանեսյանը նշեց, որ առարկայական օրացուցային-թեմատիկ պլանները, կազմվել են ոչ թե հիմք ընդունելով դասագրքերը, այլ հաստատված ծրագրերը, հիմք ընդունելով նոր չափորոշչային պահանջները և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի օգոստոսի 14-ի հրամանի պահանջները։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, օրացուցային-թեմատիկ պլանները, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները, առարկայական ծրագրերը, ուսումնական պլանը:

Լսեցին 7. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկման հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց նախագծային աշխատանքների կազմակերպման փորձը 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում և առաջարկեց առաջնորդվել նախորդ տարի 7-րդ դասարաններում իրականացրած աշխատանքների կազմակերպման փորձով: Հիշեցրեց նախագծային աշխատանքներ կատարելու կարգը, նշեց, որ մասնախմբի անդամների կողմից 7-րդ և 8-րդ դասարանների համար ներկայացվել են համապատասխան թեմաները: Զեկուցողը ներկայացրեց, որ ուսուցիչներն աշակերտական չաթերին են ուղարկել յուրաքանչյուր դասարանի համար նախատեսված թեմաները, ղեկավարներին, և արդեն իսկ աշակերտները բաժանվել են խմբերի, ընտրել են իրենց թեմաները և ղեկավարներին:

Զեկուցողը նաև նշեց Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգը, ինչպես նաև առաջարկեց, հիմք ընդունելով վերոնշյալ կարգը նախագծային աշխատանքների պաշտպանություններն իրականացնել առարկայական հանձնաժողովներով, որի կազմում առաջարկեց ընդգրկել տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, նույն կամ հարակից առարկայի ուսուցիչները, տնօրենի տեղակալը:

Զեկուցողը ներկայացրեց նաև նախագծային աշխատանքների գնահատման կարգը, որը սահմանված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի նախագծային ուսուցման հայեցակարգի և ուսուցիչների վերապատրաստման մոդուլի հաստատման մասին հրամանում:

Արտահայտվեցին՝ Ա. Մարտիրոսյանը, Ա. Զեյնալյանը:

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ ուսումնական տարում կատարված նախագծային աշխատանքները օգնում են այս տարի ավելի կազմակերպված կերպով կատարել այդ աշխատանքները:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել նախագծային աշխատանքների թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է):

Լսեցին 8. Բնագիտամաթեմատիկական առարկաներից տրվող գրավոր աշխատանքների, լաբորատոր, գործնական, ամփոփիչ աշխատանքների քանակի ու ձևերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ առարկայի առանձնահատկություններից կախված ուսուցիչը ինքն է որոշում գրավոր աշխատանքների, գնահատվող լաբորատոր, գործնական աշխատանքների, ինչպես նաև ամփոփիչ աշխատանքների քանակն ու տեսակները: Հիմնականում գրավոր աշխատանքների քանակը համապատասխանեցվում է առարկայի շաբաթական ժամաքանակին: Յուրաքանչյուր կիսամյակում մեկական գործնական աշխատանքը պարտադիր է:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Կ. Արզումանյանը:

Ս. Ավանեսյանը նշեց, որ յուրաքանչյուր թեմայի ամփոփման համար պետք է նախապես նշել, ինչ ձևով են իրականացնում ամփոփիչ աշխատանքը, դրանից առաջ ուսուցիչը անպայման պետք է իրականացնի հայտորոշիչ և ձևավորող գնահատում, տրվելիք աշխատանքները պետք է հաստատվեն մ/մ նիստում։

Որոշեցին՝ Խիստ ուշադրության արժանացնել նախապես հաստատված գրավոր աշխատանքների, գործնական, լաբորատոր, ամփոփիչ աշխատանքների քանակությանը, պահպանել այն և տալ ըստ հաստատված օրացուցային-թեմատիկ պլանների։ Հաստատել Բնագիտամաթեմատիկական առարկաներից տրվող գրավոր աշխատանքների, լաբորատոր, գործնական, ամփոփիչ աշխատանքների քանակը ու ձևերը (կցվում է)։

Լսեցին 9. Ըստ նոր ՀՊՉ-ների 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս.Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ պետք է հիմք ընդունել Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և 2024-2025 ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում աշակերտների գնահատումն իրականացնել այդ չափանիշներին համապատասխան։ Ըստ այդ չափանիշների 2024-2025 ուսումնական տարում 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)։

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը։ Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից։ Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում։

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ

5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) Տ-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Մ. Մկրտչյանը

Նրանք նշեցին, որ նախորդ տարվա 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում գնահատումը իրականացվել է հենց այդ ձևով, որի արդյունքում արդեն իսկ կա ձեռքբերված փորձ։

Որոշեցին՝ Հաստատել նոր գնահատման կարգը, 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ-ների համաձայն՝ հիմք ընդունելով Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները։ Բնագիտամաթեմատիկական առարկաների մասնախմբում ընդգրկված առարկաների համար կիրառել հետևյալ գնահատման ձևերը, մեթոդները, հնարները.

2024-2025 ուսումնական տարում 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.
1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)։

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը։ Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից։ Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում։

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)

12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Լսեցին 10. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ երկարօրյա ուսուցումն իրականացվում է 2023 թվականի սեպտեմբերի 4-ին №113-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը:

Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝

ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.

բ. դասապատրաստումներին աջակցելու.

գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:

2) Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար դիմում է տնօրենին՝

1) այն դասարաններում, որտեղ չի իրականացվում միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ ունենալու.

2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու դեպքերում: Զեկուցողն առաջարկեց ուսուցման ընթացքում դիտարկել այն աշակերտներին, որոնք ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից գրանցում են ցածր արդյունքներ, նրանց կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ էլեկտրոնային մատյանում տվյալ թեմաներից գնահատել 1-3 գնահատական, այսպիսով ապահովել 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու պայմանը և այդպիսով տվյալ աշակերտին ընդգրկելերկարօրյա խմբերում:

Արտահայտվեցին՝ Մ. Բաբայանը, Ս. Բաղդասարյանը

Արտահայտվողները նշեցին, որ գնահատումը կատարելիս պետք է հաշվի առնել հայտորոշիչ և ձևավորող գնահատման արդյունքները:

Որոշեցին՝ 1. Դպրոցում երկարօրյա ուսուցումն իրականացնել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի համաձայն:

2. Ուսուցման ընթացքում դիտարկել այն աշակերտներին, որոնք ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից գրանցում են ցածր արդյունքներ, նրանց կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ էլեկտրոնային մատյանում տվյալ թեմաներից գնահատել 1-3 գնահատական, այսպիսով ապահովել 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու պայմանը և այդպիսով տվյալ աշակերտին ընդգրկել երկարօրյա խմբերում:

Լսեցին 11. 2024-2025 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, 2024-2025 ուսումնական տարում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող հիմնական աշխատանքները, այդ աշակերտների համար պարզեցման

եղանակները, ինչպես նաև կոնկրետ օրինակներով ներկայացրեց ԱՈՒՊ-ների լրացումը: Զեկուցողը նշեց նաև, որ 2024-2025 ուսումնական տարվա մեկնարկին դպրոցն ունի 20 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, որոնց հետ աշխատանքն անհրաժեշտ է իրականացնել հատուկ սահմանված կարգով: Զեկուցողն առանձին-առանձին անդրադարձ կատարեց բոլոր աշակերտներին և նշեց նրանց հետ իրականացվող աշխատանքների գրաֆիկը:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ դպրոցում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքները միշտ պատշաճ են իրականացվել ու նախորդ ուսումնական տարին էլ բացառություն չէ: Առանձնահատուկ անդրադարձ կատարվեց ծանր խնդրով աշակերտներին, որոնց հետ աշխատանքն առանձնահատուկ հմտություններ են պահանջում: Արտահայտվողը կարևորեց, որ ԱՈՒՊ-ները լրացվեն նոր կարգին համապատասխան, պարզեցումները կատարվեն հիմք ընդունելով ԿԱՊԿՈՒ աշակերտների կարողություններն ու ընդունակությունները: Սերգեյ Ավանեսյանը կարևորեց նաև դիտարկման թերթիկների լրացումը, ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժի ու հոգեբանի հետ համատեղ ու համագործակցային աշխատանքը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, աշխատանքներն ու պարզեցումներն իրականացնել սահմանված պահանջներին համապատասխան, սահմանված կարգով կիրառել դիտարկման թերթիկները:

Լսեցին 12. Բնագիտամաթեմատիկական մասնախմբում ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման անհրաժեշտության մասին, քանի որ դասի այս տիպերը լինում են օրինակելի, ուսուցանող, որտեղ հաշվի են առնվում դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր մանրուքները: Կարևորվեց նաև բաց դասերի կազմակերպումը, քանի որ հնարավորություն է ստեղծվում ուսուցիչների ձեռք բերած դրական փորձը տարածել և մասայականացնել: Զեկուցողը ներկայացրեց նաև բաց դասերի, բաց դաս-միջոցառումների, միջոցառումների ժամանակացույցի նախագիծը:

Արտահայտվեցին՝ Օլ. Ղուլյանը:

Նա նշեց, որ այդպիսի դասերը պետք է հագեցած լիբեն ցուցադրական և տեխնոլոգիական մեթոդների ընտրությամբ, աշակերտները պատասխանատվությամբ վերաբերվեն այդ դասերին:

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից իրականացվող բաց դասեր, բաց դաս-դաս միջոցառումները անցկացնել սահմանված ժամկետներում, պատշաճ մակարդակով (կցվում է):

Լսեցին 13. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվանից սկսած դպրոցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրվում են հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները: Ավանեսյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը համապատասխանում է կարգի պահանջներին, ինչպես նաև առաջարկեց 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում, այդ

թվում՝ փոխադարձ դասալսում դպրոցի ձևանմուշի պահանջներին համապատասխան, դրանք արձանագրել արձանագրությունների համապատասխան ձևանմուշների մեջ, իսկ կիսամյակի ավարտին դրանք սահմանված կարգով արխիվացնել:

Արտահայտվեցին՝ Մեթոդմիավորման անդամները:

Արտահայտվողները նշեցին, որ դպրոցի ձևանմուշը, որով արձանագրվում են դասալսումները, շատ հարմար է:

Որոշեցին՝ 2024-2025 ուսումնական տարվա ընթաքցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրել հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները, 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում դպրոցի կողմից մշակված ձևաթղթով, այդ թվում՝ փոխադարձ դասալսում: Կիսամյակների և ուսումնական տարվա ավարտին ամփոփել դասալսումները և ներկայացնել մանկավարժական խորհդրի ամփոփիչ նիստում:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի Ժ/Պ՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2

«23» սեպտեմբերի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Մարինե Բաբայան
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. 2024-2025 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի ընդունած որոշումների կատարման մասին հաղորդում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. Էլեկտրոնային դասամատյանների լրացման փոփոխությունների հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Նախագծային աշխատանքների մասին կատարված կազմակերպչական աշխատանքների ընթացքի մասին հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ս.Ավանեսյան)
5. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացման հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա.. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2024-2025 ուսումնական տարվա 1-ին նիստում ընդունած որոշումների կատարման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների ընթացքը։
Որոշումների զգալի մասը կատարված են։ Որոշ աշխատանքներ արդեն կատարվում են։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։
Արտահայտվողները նշեցին, որ փոփոխությունների պատճառով աշխատանքները որոշ չափով դանդաղել են, այնուամենայնիվ, նրանք հաջողությամբ գրեթե ավարտված են։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը։

Լսեցին 3. Էլեկտրոնային դասամատյանների լրացման փոփոխությունների հարցերը։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային դասամատյաններում լրացումներ կատարելու համար նոր փոփոխությունները, օրացուցային թեմատիկ պլանների ներբեռնման հետ կապված փոփոխությունները, հորդորեց անսխալ աշխատել։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։
Արտահայտվողները նշեցին, որ էլեկտրոնային դասամատյանում տվյալների ներբեռնման աշխատանքների ժամկետները երկարաձգելու արդյունքում իրենք հասցրել են կատարել բոլոր լրացումները։

Որոշեցին՝ Էլեկտրոնային դասամատյանների լրացման փոփոխությունների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն։

Լսեցին 4. Նախագծային աշխատանքների մասին կատարված կազմակերպչական աշխատանքների ընթացքի մասին հարցերի քննարկում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը նշեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամները նախագծային աշխատանքների կազմակերպչական մասը հիմնականում ավարտել են։ Աշակերտական խմբերը հիմնականում կազմված են, բոլոր աշակերտներն ընգրկված են, թեմաներն ընտրված են, կազմված են նաև նախագծերի պլանները և թեմատիկ պլանները։ 2024-2025 ուսումնական տարում նախագծային աշխատանքները հիմնականում միջառարկայական են։

Արտահայտվեցին՝ Ա. Մարտիրոսյանը, Մ. Բաբայանը։
Արտահայտվողները նշեցին, որ նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ այս ուսումնական տարում կազմակերպչական աշխատանքները ավելի հեշտ ու արագ իրականացվեցին։

Որոշեցին՝ Նախագծային աշխատանքների կազմակերպման մասին զեկուցումն ընդունել ի գիտություն։

Լսեցին 5. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացման հետ կապված հարցերը։
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը նշեց, որ դասալսումներն ու փոխադարձ դասալսումները շատ կարևոր տեղ ունեն մեթոդմիավորման աշխատանքներում։ Դասալսումները նպատակ ունեն ուսուցիչներին օգնելու, հատկապես փոխադարձ դասալսումների շնորհիվ կատարվում է փորձի, դասավանդման նոր մեթոդների փոխանակում։ Զեկուցողը շեշտեց, որ կարևոր է համարում ուշադրությունն ուղղել սկսնակ ուսուցիչներին։ Դասալսումների քննարկման ժամանակ պետք է հաշվի առնվի նոր ՀՊՉ-ներով աշխատելու

առանձնահատկությունները, որի մասին մանրամասն ներկայացված է Սերգեյ Ավանեսյանի կողմից, ուշադրություն դարձնել այդ ձևերին ու մեթոդներին։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

ՄՄ անդամները կարևորեցին դասալսումների և փոխադարձ դասալսումների նշանակությունը։

Սերգեյ Ավանեսյանն առաջարկեց լինել ավելի ուշադիր 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում կատարվող դասալսումների ժամանակ, աջակցել ուսուցիչներին հենց այս դասարանների դասագրքերի հետ կապված ծրագրային պահանջների կատարման համար։ Անհրաժեշտ համարեց, որ փոխադարձ դասալսումների արդյունքում ուսուցիչները քննարկեն առաջացած խնդիրները և աշխատանքները կազմակերպեն ընդհանուր որոշումներ կայացնելուց հետո։

Որոշեցին՝ 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը երեք դասալսում՝ մշակված դասալսման թերթիկի պահանջներին համապատասխան, հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ հատկապես ուշադրություն դարձնելով 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ուսումնասիրվող առարկաներին։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի Ժ/Պ՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3

«21» հոկտեմբերի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Մարինե Բաբայան
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվություն:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Բնագիտական առարկաների՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, դրվածքը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
5. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպում օլիմպիադայի դպրոցական փուլի կազմակերպում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
7. 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
8. Մեթոդական զեկուցում «Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց»
(զեկուցող՝ Հ. Ալավերդյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա.. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման մասին տեղեկատվություն, նշվեց որ, ընդունված որոշումները հիմնականում կատարվել են սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքները շատ կարևոր են, դրանք վեր են հանում աշակերտների մաթեմատիկական իմացության մակարդակը: 9-րդ դասարաններում լրացուցիչ ստուգվում են քննություններին պատրաստ լինելու աստիճանը: Զեկուցողն առաջարկեց նաև տնօրենության կողմից գրավոր աշխատանքները տալ 4 տարբերակով՝ թեստային սկզբունքով:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը, Ա. Զեյնալյանը:

Արտահայտվողները նշեցին, որ թեստերը հիմնականում կազմվում են միջին մակարդակով առաջադրանքներով, որպեսզի սովորողները կարողանան ինքնուրույն աշխատել: Արտահայտվողները նշեցին նաև, որ անհրաժեշտ է հետևել եռամակարդակ թեստեր կամ աշխատանքներ կազմելու սկզբունքին, ինչպես նաև գրավոր աշխատանքները հնարավորինս համապատասխանեցնել ավարտական թեստերին սկզբունքին:

Որոշեցին՝ Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքները կազմել 4 տարբերակով:

Լսեցին 4. Բնագիտական առարկաների՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, դրվածքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ առարկաների նկատմամբ ավելի մեծ հետաքրքրություն առաջացնելու նպատակով անհրաժեշտ է ավելի արդյունավետ ու ժամանակակից մեթոդներով վարել դասապրոցեսը, ավելի մեծ ուշադրություն դարձնել սովորողների հմտությունների և կարողությունների զարգացման վրա: Դրվածքի ուսումնասիրման համար կատարել դասալսումներ ու փոխադարձ դասալսումներ, դասերի քննարկումներ, անցկացնել բաց դասեր:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները նշեցին, որ հատկապես բնագիտական առարկաների դասավանդման համար շատ կարևոր է նոր ու կահավորված կաբինետներ ու լաբորատորիաներ ունենալու հանգամանքը, որտեղ սովորողները հնարավորություն կունենան կատարել համապատասխան աշխատանքներ, ուսուցչի հսկողությամբ:

Որոշեցին՝ Մանկավարժական խորհրդի նիստում առաջարկել 7-9-րդ դասարաններում Բնագիտական առարկաներից՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն,

աշխարհագրություն իրականացնել դասավանդման դրվածքի ուսումնասիրություն:

Լսեցին 5. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպման, օլիմպիադայի դպրոցական փուլի կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողն առաջարկեց ճիշտ և համակարգված կազմակերպել օլիմպիադայի դպրոցական փուլին մասնացկող աշակերտների հետ տարվող աշխատանքները: Շաբաթվա ընթացքում առնվազն երկու անգամ ստուգել տրված հանձնարարությունների կատարումը: Զեկուցողը նշեց, որ առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպումը նպատակահարմար է, որ իրականացնեն մեթոդմիավորման նախագահը, տվյալ առարկաների ուսուցիչները, ինչպես նաև ուսուցչի օգնականները:

Արտահայտվեցին՝ Ա. Զեյնալյանը, Ս. Ավանեսյանը:

Արտահայտվողները կարևորեցին աշակերտների հետ իրականացվող աշխատանքների պատշաճ իրականացումը և նշանակալի արդյունքների արձանագրումը: Նշվեց նաև տարածքային փուլին աշակերտների մասնակցության կարևորության, անհրաժեշտության մասին:

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչներին հանձնարարել օլիմպիադային մասնակցող աշակերտների հետ կազմակերպել անհատական աշխատանքներ և նախապատրաստել օլիմպիադային:

Հավանության արժանացնել օլիմպիադայի դպրոցական փուլի ժամանակացույցի նախագիծը, հանձնաժողովների, վերահսկողների կազմը (կցվում է):

Լսեցին 6. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց ստուգումների արդյունքները, կարևորեց էլեկտրոնային մատենավարության իրականացման կարգի պահպանման անհրաժեշտությունը, նշեց, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մատենավարության մեջ տեղի ունեցած փոփոխություններին: Մատենավարության հարցում անհրաժեշտ է ստանալ ճիշտ խորհրդատվություն և հետևել գնահատման կարգի մեջ կատարված փոփոխություններին: Գրանցումները կատարել ըստ ՕԹՊ-ների և թույլ չտալ շեղումներ՝ հատկապես գրավոր և գործնական աշխատանքների, ամփոփումների դեպքում:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից: Ըստ անհրաժեշտության ժամանակին օգնություն ցույց տալ ուսուցիչներին, կատարել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ՝ մատենավարության վարման կարգի վերաբերյալ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները, կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, առաջացած խնդիրներն ու հարցերը քննարկել Սերգեյ Ավանեսյանի հետ:

Լսեցին 7. 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների ու մյուս մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացվել են դասալսումներ, դասերի դիտարկումներ, որոնց ընթացքում արձանագրվել է, որ 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները, օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային տարբերակով, մատենավարությունը կազմակերպված էր օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան: Զեկուցողը նշեց, որ օրվա թեմատիկ պլանների մեջ ըստ պահանջի սահմանված էին տվյալ թեմայի նպատակը, վերջնարդյունքը: Օրվա դասի պլանի գործընթացի քայլերում սահմանված էին այն քայլերը, որոնց համաձայն իրականացվում է դասապրոցեսը: Հստակ նշված էին ռեսուրսներն ու մեթոդները: Զեկուցողը նշեց, որ քանի որ և օրվա դասի պլանի, և թեմատիկ պլանի մեջ հստակ սահմանված է տվյալ օրվա թեմայի վերջնարդյունքը, ուսուցիչները կարողանում են պատկերացնել, թե դասի ավարտին ինչ վերջնարդյունքներ պետք է ապահովեն, ինչն ուսուցիչների մոտ հաջողվում է:

Զեկուցողը նշեց, որ առանձնակի ուշադրություն է դարձվել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածությանն ու գնահատման վերաբերյալ հարցերին: Աշակերտների ներգրավվածությանն հետ զեկուցողը նշեց, որ խնդիրը հիմնականում կապված է այն աշակերտների հետ, որոնք հետ են մնում, շեշտեց, որ այդ աշակերտներն ընդգրկվում են երկարօրյա խմբերում: ԿԱՊԿՈՒ աշակերտների ամբողջական ներգրավվումը դասապրոցեսին իրականացվում է հիմնականում ուսուցչի օգնականների օգնությամբ և նրանց համար սահմանված ԱՈՒՊ-ների համաձայն:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց գնահատման հետ կապված հարցերին, նշեց, որ անհրաժեշտ է կիրառել նախորդ տարվա փորձը, որը թույլ կտա իրագործել գնահատման նոր համակարգի պահանջները, որի արդյունքում կարելի է կիրառել այն ամբողջ գործիքակազմը, որն ընձեռում է հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ գնահատումները:

Զեկուցողն առաջարկեց ուշադրություն դարձնել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգին և այս ուղղություններով կազմակերպել քննարկումներ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ համակարծիք են զեկուցողի դիտարկումների հետ, հավելեցին, որ անհրաժեշտ են համարում քննարկումներ կազմակերպել՝ ունեցած գիտելիքները բարելավելու, թարմացնելու ուղղությամբ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին զեկուցումը: ՄՄ նիստերի ընթացքում իրականացնել քննարկումներ առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգի շուրջ:

Լսեցին 8. Մեթոդական զեկուցում «Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց» թեմայով մեթոդական զեկուցման մասին:

(զեկուցող՝ Հ. Ալավերդյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց քննադատական մտածողության կարևորությունը ուսուցման արդյունավետության բարձրցման համար: Սովորողները իրենք են դառնում ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից, զարգանում է նրանց ստեղծագործական մտածողությունը, ի հայտ

են գալիս սովորողների պոտենցիալ հնարավորությունները, իրենք իրենց ավելի պատասխանատու և ավելի արժեքավորված են զգում: Ալավերդյանը մանրամասն ներկայացրեց մանկավարժական գործընթացում քննադատական մտածողության զարգացման կարևոր սկզբունքները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ շատ դեպքերում իրենք աշխատում են այդ մեթոդներով, բայց ոչ միշտ է հաջողվում բոլոր աշակերտների հետ աշխատել անհատապես, հատկապես երբ աշակերտների թիվը շատ է:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի Ժ/Պ՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №4

«25» նոյեմբերի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Մարինե Բաբայան
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ռեսուրս կաբինետի աշխատակիցները

ՕՐԱԿԱՐԳ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
4. Էլեկտրոնային դասամատյանների ստուգման մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. Փոխադարձ դասալսումների մասին:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. 5-9-րդ դասարաններում բնագիտական առարկաների՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, բնություն դասավանդման դրվածքի ամփոփման մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
7. Սերգեյ Ավանեսյանի և Օլյա Ղուլյանի կողմից համահեղինակած «Օպերացիոն համակարգեր, ծրագրեր» անվանումով ուսումնական ձեռնարկը:
(զեկուցող՝ Օլ. Ղուլյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումները սահմանված ժամկետներում կատարվել են: Մաթեմատիկայից տրված գրավոր աշխատանքների ամփոփման, ինչպես նաև բնագիտական առարկաների դրվածքի արդյունքների մասին կներկայացնենք հաջորդ նիստում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունների հետ կապված հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքը թիմային աշխատանք է, անհրաժեշտ է սերտ համագործակցություն մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ: Կատարված աշխատանքները ցույց են տալիս, որ այդ համագործակցությունը ավելի մեծ արդյունք է տալիս: Նա նաև նշեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների և դիտարկման թերթիկների լրացման աշխատանքները կտարվում են սահմանված ժամկետներում, պատշաճ ձևով: ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատում են նաև ԳՏՄԱԿ-ի մասնագետները, նրանք սահմանված կարգով 2 ամիսը մեկ կատարում են քննարկումներ ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հոգեբանների, հատուկ մանկավարժների և նշված աշակերտների ծնողների հետ: Այդ քննարկումներին մասնակցում է նաև տնօրինությունը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ս. Բաղդասարյանը, Մ. Բաբայանը:

Արտահայտվողները նշեցին, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքները խիստ անհատական են և յուրաքանչյուր աշակերտ պահանջում է հատուկ մոտեցում: Շատ կարևոր է նաև հաշվի առնել նրանց տարիքային առանձահատկությունները, ինչպես նաև ծնողների հետ կապը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքների մասին տրված տեղեկատվությունը:

Լսեցին 4. Էլեկտրոնային դասամատյանների ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքների մասին: Հատկապես նոր չափորոշչային պահանջների համաձայն ամփոփիչ աշխատանքների գնահատման մասին, շեշտեց, որ անհրաժեշտ է այնպես անել, որ աշակերտները նշված աշխատանքների համար գնահատված լինեն: Կարևորեց, որ ուսուցիչներն աշխատեն այնպես, որ հնարավորինս բացառվեն թերություններն ու սխալները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները նշեցին, որ ամեն ինչ անում են մատենավարությունը ճիշտ և անսխալ իրականացնելու համար:

Որոշեցին՝ Էլեկտրոնային դասամատյանների ստուգման մասին զեկուցումն ընդունել ի գիտություն:

Լսեցին 5. Փոխադարձ դասալսումների մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ մեթոդմիավորման աշխատանքներում կարևոր դեր ունեն փոխադարձ դասալսումները: Դասալսումները հատկապես տարբեր առարկաների դրվածքի ուսումնասիրման ժամանակ, հնարավորություն են տալիս ավելի լավ պատկերացում կազմել առարկայի մասին: Փոխադարձ դասալսումները նաև փորձի փոխանակման լավագույն ձև են, հատկապես նոր մանկավարժական մեթոդների, ձևի ու միջոցների կիրառմամբ դասերի դեպքում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ա. Առստամյանը:

Արաքսյա Առստամյանը նշեց, որ դասալսման համար, դասալսողը կարող է իր առջև հստակ նպատակ դնել, թե հատկապես ինչ է ուզում պարզել տվյալ դասալսման ժամանակ՝ գնահատման ձև, դասի վարման փուլերի հաջորդականություն և այլն, ու ավելի մեծ ուշադրություն դարձնել դրանց:

ՄՄ անդամները նշեցին, որ դասալսումները ոչ թե քննադատության համար են, այլ առկա խնդիրները համատեղ լուծելու:

Որոշեցին՝ Փոխադարձ դասալսումների մասին զեկուցումն ու նկատառումները ընդունել ի գիտություն:

Լսեցին 6. 5-9-րդ դասարաններում բնագիտական առարկաների՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, բնություն դասավանդման դրվածքի ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ բնագիտական առարկաների դրվածքի ուսումնասիրման համար կատարվել են դասալսումներ տնօրինության, մ/մ նախագահի կողմից, կատարվել են նաև փոխադարձ դասալսումներ, որոնց արդյունքները ներկայացված են համապատասխան արձանագրություններում: Դասալսումների արդյունքները ցույց են տալիս, որ նոր ՀՊՉ-ների ծրագրերով բավականին մեծ տեղ է հատկացված լաբորատոր և գործնական աշխատանքներին, աշխատանքները բավականին պարզեցված են, ինչը հնարավորություն է տալիս, որ սովորողներն իրենք ուսուցչի հսկողությամբ կատարեն այդ փորձերը: Նոր ՀՊՉ-ները հնարավորություն են տվել, որպեսզի աշակերտները հաճախակի կատարեն գործնական և լաբորատոր աշխատանքները: Դասաժամին ավելի շատ են օգտագործվում դասավանդման նոր մեթոդներ, ավելի շատ աշակերտներ են ներգրավված դասապրոցեսում, անց են կացվել բաց դասեր: Իհարկե, ժամանակակից կահավորված լաբորատորիաներում աշխատանքն ավելի արդյունավետ կլիներ, սակայն այս պահին ուսուցիչները կիրառում են այն բոլոր հնարավորությունները, որոնք առկա են դպրոցում: Զեկուցողը նշեց, որ դասապրոցեսի ընթացքում ուսուցիչների կողմից համեմատաբար քիչ են կիրառվում ՏՀՏ գործիքներ, ինչը նաև կապված է այն հանգամանքի հետ, որ դպրոցն այս պահին ՏՀՏ գործիքներով պատշաճ կերպով համալրված չէ: ՏՀՏ գործիքներն ուսուցիչների կողմից հիմնականում կիրառվում են բաց դասերի և դաս-միջոցառումների ժամանակ: Ուսուցիչների կողմից տրված են ՕԹՊ-ով սահմանված ամփոփիչ աշխատանքներ՝ 5-8-րդ դասարաններում:

Արտահայտվեցին՝ ՄՄանդամները:

Արտահայտվողները նշեցին, որ սովորողների հետաքրքրությունները բնագիտական առարկաների նկատմամբ նվազել են և անհրաժեշտ է նոր, ավելի հետաքրքիր մեթոդներ կիրառել, ինչպես նաև դասավանդման ընթացքում ավելի հաճախ օգտագործել նորագույն տեխնոլոգիաներ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 5-9-րդ դասարաններում բնագիտական առարկաների՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, բնություն դասավանդման դրվածքի ամփոփման մասին զեկուցումը:

Լսեցին 7. Սերգեյ Ավանեսյանի և Օլյա Ղուլյանի կողմից համահեղինակած «Օպերացիոն համակարգեր, ծրագրեր» անվանումով ուսումնական ձեռնարկի մասին հարցը:

(զեկուցող՝ Օլ. Ղուլյան)

Զեկուցողը ներկայացրեց իր, դպրոցի տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանի, Գորիսի պետական քոլեջի Մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և տնտեսագիտության ամբիոնի դասախոս Զարինե Աբգարյանի կողմից համահեղինակած «Օպերացիոն համակարգեր, ծրագրեր» անվանումով ուսումնական ձեռնարկը:

Զեկուցողը նշեց, որ ձեռնարկում անդրադարձ է կատարվում հաշվողական տեխնիկայի զարգացման պատմությանը, անհատական համակարգիչներին, ինտերֆեյսին, տարածված օպերացիոն համակարգերին, համակարգչային ծրագրերին և մի շարք այլ թեմաների:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են ձեռնարկը, շեշտելով, որ հսկայական աշխատանք է կատարվել:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել «Օպերացիոն համակարգեր, ծրագրեր» անվանումով ուսումնական ձեռնարկը:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №5

«23» դեկտեմբերի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Մարինե Բաբայան
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ՄԿԱ գծով համակարգող Արմիդա Գևորգյանը, ԴԱԿ Արմինե Հարությունյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. Տնօրենության կողմից առաջին կիսամյակում «Մաթեմատիկա» առարկայից տրված գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
4. Բնագիտամաթեմատիկական առարկաներից առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպման և անցկացման մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
5. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման դասալսումների արդյունքների ամփոփման մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
6. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների կողմից տրված թեմատիկ գրավոր աշխատանքների (9-րդ դասարան), ամփոփիչ գրավոր աշխատանքների և ծրագրային թեմաների կատարողականի ստուգման մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
7. Էլեկտրոնային դասամատյանների ստուգման արդյունքների մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
8. 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում բնագիտամաթեմատիկական առարկաների գծով իրականացված նախագծային աշխատանքերի ամփոփման մասին:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
9. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխություն և հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

10. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

11. 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

12. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկում։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

13. Հերմինե Ալավերդյանի կողմից «Գնահատում, Ամփոփիչ միավորային գնահատում, նպատակը, ձևերը, տեսակները, ԿԱՊԿՈՒ սովորողի միավորային գնահատման առանձնահատկությունները» թեմայով հետազոտական աշխատանքի ներկայացում։

(զեկուցող՝ Հ. Ալավերդյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը։

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը։

Լսեցին 3. Տնօրենության կողմից առաջին կիսամյակում «Մաթեմատիկա» առարկայից տրված գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքներում կարևորեց աշակերտների մեծ մասի կողմից ինքնուրույն աշխատելու կարողությունը և ուսուցիչների կոմից գրավորների ստուգման մեթոդները, որը թույլ է տալիս ավելի անաչառ ու անկողմնակալ լինել, հնարավորություն է տալիս պարզելու գրավոր աշխատանքների ժամանակ սովորողների մոտ հանդիպող դժվարություններն ու խնդիրները։

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը, Ա. Զեյնալյանը։

Արտահայտվողները նշեցին, որ գրավոր աշխատանքները կազմված են եղել սովորողների միջին մակարդակին համապատասխան, ինչպես նաև գործող ծրագրերի սահմաններում։ Հնարավորինս անաչառ և անկողմնակալ ստուգումներ են անցկացվել, սովորողների հետ հետագա աշխատանքները ավելի ճիշտ կազմակերպելու համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը)։

Լսեցին 4. Բնագիտամաթեմատիկական առարկաներից առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպման և անցկացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաներից դպրոցական փուլին մասնակցող աշակերտների հայտը ներկայացված է: Ներկայացված են այն սովորողները, որոնք իրենք են մասնակցության ցանկություն հայտնել: Կազմված է ժամանակացույցը դպրոցական փուլի հանձնաժողովների, կազմ-կոմիտեների կազմերը:

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է անվավեր համարել մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումը, համապատասխան որի սահմանվել էր դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի ժամանակացույցը,

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները նշեցին, որ նույն աշակերտի մասնակցությունը մի քանի օլիմպիադաների լրացուցիչ դժվարություններ է ստեղծում աշակերտի համար, ինչի արդյունքում աշակերտը չի կարողանում պատշաճ կերպով ինքնադրսևորվել: Առաջարկեցին այսուհետ նույնպես կարևորել ոչ միայն աշակերտների ցանկությունը որևէ առարկայից օլիմպիադային մասնակցելու հետ կապված, այլ նաև նրանց մասնակցության հարցը քննարկել բոլոր առարկաների ուսուցիչների հետ և յուրաքանչյուր աշակերտի ընդգրկել այն առարկայի օլիմպիադայի մասնակցության ցանկում, որից նա կկարողանա ցուցաբերել առավել արդյունք:

Որոշեցին՝

1. Ընդունել ի գիտություն առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի փոփոխություններն ու նոր կարգը:
2. Հավանության արժանացնել 2024-2025 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի հանձնաժողովների, կազմկոմիտեների կազմերը, ժամանակացույցը (կցվում է):
3. Անվավեր ճանաչել համարել մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումը նախկին սկզբունքով դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի անցկացման մասին:

Լսեցին 5. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման դասալսումների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակում անց են կացվել դասալսումներ և՛ տնօրինության, և՛ մեթոդմիավորման կողմից, ինչպես նաև փոխադարձ դասալսումներ: Դասալսումները կատարվել են տարբեր նպատակներով՝ նոր ՀՊՉ-ների ծրագրերի կիրառում, բնագիտական առարկաների դրվածքի ուսումնասիրություն: Նոր ուսուցիչների մոտ (Հայկ Օհանյան), օգնելու նպատակով դասալսումները կատարվել են ավելի հաճախ: Դասալսումների ժամանակ շատ կարևոր է ուշադրություն դարձնել ինչպես ուսուցչի կողմից դասի մատուցմանը, շարադրանքին, այնպես էլ դասարանում աշակերտների համար հարմարավետ պայմաններ ստեղծելը, առողջ, անկաշկանդ մթնոլորտի ձևավորումը, հարգալից վերաբերմունքը, աշակերտների ներգրավվածությունը, ԿԱՊԿՈՒ աշակերտների մասնակցությունը, սովորողների ինքնուրույն մտածողության խրախուսումն և այլն, որոնք մանրամասն շարադրված են դասալսման արձանագրության թերթիկներում:

Արտահայտվեցին՝ Հ. Օհանյանը, Ս. Բաղդասարյանը

Հայկ Օհանյանը նշեց, որ 7-րդ դասարաններում սովորողները բավականին մեծ հետաքրքրություն են ցուցաբերում «Ֆիզիկա» առարկայի նկատմամբ: Սակայն գործնական և լաբորատոր աշխատաների համար համապատասխան սարքեր քիչ կան: Սիրուշ Բաղդասարյանը նշեց, որ մաթեմատիկայի ուսուցիչները բոլոր հարցերում համագործակցում են միմյանց հետ, ինչն էլ ավելի է հեշտացնում դասավանդման աշխատանքները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 6. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների կողմից տրված թեմատիկ գրավոր աշխատանքների (9-րդ դասարան), ամփոփիչ գրավոր աշխատանքների և ծրագրային թեմաների կատարողականի ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ ուսուցիչների կողմից օրացուցային թեմատիկ պլաններով նախատեսված թեմատիկ և ամփոփիչ աշխատանքները կատարված են: Գրավորները ստուգված են և գնահատված: Ծրագրային թեմաների բացթողումներ չկան:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները նշեցին, որ բոլոր աշակերտներն ունեն ՕԹՊ-ներով նախատեսված ամփոփիչ աշխատանքներին համապատասխան գնահատականներ: Սերգեյ Ավանեսյանը հիշեցրեց, որ նոր չափորոշչային դասարաններում՝ 2-3-րդ և 5-8-րդ դասարաններում գործնական և լաբորատոր աշխատանքները պետք է գնահատվեն մինչև նոյեմբերի մեկը:

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների կողմից տրված թեմատիկ գրավոր աշխատանքների (9-րդ դասարան), ամփոփիչ գրավոր աշխատանքների և ծրագրային թեմաների կատարողականի ստուգման մասին զեկուցումն ընդունել ի գիտություն:

Լսեցին 7. Էլեկտրոնային դասամատյանների ստուգման արդյունքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ տնօրինության կողմից էլեկտրոնային դասամատյանների ստուգման արդյունքում նկատված թերությունները վերացված են: ՕԹՊ-ով համապատասխան գրավոր աշխատանքների քանակը ապահովված է, լրացված են նաև համապատասխան թեմաները: Անհրաժեշտ է առաջին կիսամյակի գնահատականների ամփոփումը ճիշտ և սահմանված ժամկետներում ավարտել:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը:

Արաքսյա Առաստամյանը խոսեց կիսամյակի ամփոփման վերաբերյալ որոշ կարևոր նկատառումների մասին ինքը ներկայացրել է և պետք է այդ կետերի նկատմամբ անպայման ուշադիր լինել, որպեսզի էլեկտրոնային դասամատյաններում որևէ թերություն չլինի և որևէ աշակերտ դրանից չտուժի: Մասնավորապես խոսքը 2-3-րդ դասարաններում բնութագրիչների ժամանակին պահպանումն է, ինչպես նաև 5-8-րդ դասարաններում ըստ սահմանված կարգի թեմաների ամփոփումների ժամանակ աշակերտների գնահատումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը:

Լսեցին 8. 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում բնագիտամաթեմատիկական առարկաների գծով իրականացված նախագծային աշխատանքերի ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է 9 նախագծային աշխատանք, որից.

- 6 նախագծային աշխատանք իրականացվել է 7-րդ դասարաններում, որից 2-ը՝ ներառարկայական, 4-ը՝ միջառարկայական: 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում 7-րդ դասարաններում առաջին կիսամյակում նախագծային աշխատանքներ են իրականացվել «Ֆրանսերեն», «ԹԳՀԳ», «Քիմիա», «Հայաստանի պատմություն», «Գրականություն», «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա», «Աշխարհագրություն» առարկաներից: Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները:
- 3 նախագծային աշխատանք իրականացվել է 8-րդ դասարաններում, որից 1-ը՝ ներառարկայական, 2-ը՝ միջառարկայական: 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում 8-րդ դասարաններում առաջին կիսամյակում նախագծային աշխատանքներ են իրականացվել «Ֆիզկուլտուրա», «ԹԳՀԳ», «Կենսաբանություն», «Անգլերեն» առարկաներից: Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները:

Հիմք ընդունելով Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգը, մեթոդմիավորման որոշումն ու մանկավարժական խորհրդի որոշումը, նախագծային աշխատանքների պաշտպանություններն իրականացվել են առարկայական հանձնաժողովներով, որոնց կազմում ընդգրկվել են տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, նույն կամ հարակից առարկայի ուսուցիչները, ուսումնական գծով տնօրենի տեղակալը: Զեկուցողը հավելեց, որ կարգի համաձայն բոլոր նախագծերն ու պրոդուկտները հրապարակվել են դպրոցի կայքում, որտեղ դրանց համար ստեղծվել է առանձին էջ:

Արտահայտվեցին՝ Նախագծային աշխատանքների ղեկավարները

Նախագծային աշխատանքների ղեկավարները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, պրոդուկտները, իրականացման ընթացքում առաջացած խնդիրները, ձեռքբերումները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 9 Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխության և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2-րդ կիսամյակում Բնագիտամաթեմատիկական առարկաներկաների մեթոդմիավորման ժամաբաժանման փոփոխությունները «Հայոց պատմություն», «Հանրահաշիվ» առարկաների հետ կապված: Նշեց, որ 9-րդ դասարաններում «Հայոց պատմություն» առարկայի 2 դասաժամից 1-ը փոխանցվում է «Հանրահաշիվ» առարկային, ինչի արդյունքում «Հայոց պատմություն» առարկան ունենում է 1 դասաժամ, իսկ «Հանրահաշիվ» առարկան՝ 4 դասաժամ:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ նախնական դասաբաշխումը կատարելու ժամանակ, ինչպես նաև 2024-2025 ուսումնական տարվա մեկնարկին ևս քննարկվել է փոփոխությունների մասին հարցը: Նշվել են բոլոր այն փոփոխությունները, որոնք սահմանված են օրինակելի ուսումնական պլանով և այդպիսով կատարվել է սահմանված պահանջը:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանումը (կցվում է):

Լսեցին 10 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան, շեշտեց, որ աշխատանքները կատարվել են սահմանված պահանջներին համապատասխան: Հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատում են նաև ԳՏՄԱԿ-ի մասնագետները, շեշտեց, որ ըստ սահմանված կարգի երկու ամիսը մեկ անգամ իրականացվում են քննարկումներ ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների, ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների մասնակցությամբ, որին մասնակցում են նաև տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանն ու տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը, ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում և դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 11. 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ տնօրենի, մեթոդմիավորման նախագահի և մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացվել են դասալսումներ, որոնց ընթացքում արձանագրվել է, որ 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները, օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային տարբերակով, մատենավարությունը կազմակերպված էր օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան: Զեկուցողը նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլանների մեջ ըստ պահանջի սահմանված էին տվյալ թեմայի նպատակը, վերջնարդյունքը: Միևնույն ժամանակ զեկուցողը նշեց, որ որոշակի խնդիրներ շարունակվում են նկատվել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման հետ կապված հատկապես այն դասարաններում, որտեղ աշակերտների խտությունը մեծ է և հնարավոր չի լինում բոլոր աշակերտների մոտ հավասարաչափ իրականացնել կարողությունների զարգացում: Աշակերտների մեծ թվաքանակի հետ կապված նաև ուսուցիչները դժվարանում են բոլոր աշակերտներին հավասարապես ներառել դասապրոցեսին, ավելի շատ ուշադրություն դարձնել նրանց կողմից ինքնուրույն աշխատանքների իրականացմանը: Զեկուցողը նշեց, որ քանի որ ՕԹՊ-ների մեջ հստակ

սահմանված են տվյալ օրվա թեմայի վերջնարդյունքը, ուսուցիչները կարողանում են պատկերացնել, թե դասի ավարտին ինչ վերջնարդյունքներ պետք է ապահովեն, ինչն ուսուցիչների մոտ հաջողվում է, եթե դասարանում աշակերտների խտությունը մեծ չէ:
Զեկուցողը, ինչպես նախորդիվ, այս անգամ նույնպես բոլորի ուշադրությունը հրավիրեց գնահատման հետ կապված հարցերին, նշեց, որ հիմնականում բացթողում է նկատում գնահատման դեպքում: Նախորդ քննարկումներից հետո նկատելի է, որ ուսուցիչները հիմնականում տիրապետում են գնահատման նոր համակարգին, կատարում են սահմանված պահանջները, աշակերտները գնահատվում են բացառապես ամփոփումների ժամանակ:
Զեկուցողն առաջարկեց շարունակել ուշադրության կենտրոնում պահել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգին վերաբերող հարցերը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները
Արտահայտվողները նշեցին, որ համակարծիք են զեկուցողի դիտարկումների հետ, հավելեցին, որ անհրաժեշտ են համարում կիրառել այն ուսուցիչների փորձը, որոնք նախորդ ուսումնական տարվա ընթացքում աշխատել են 5-րդ և 7-րդ դասարաններում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին ինֆորմացիան:

Լսեցին 12. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում երկարօրյա ուսուցման խմբակ է կազմակերպվել 2-3-րդ, 5-8-րդ դասարանների 17 աշակերտի համար: Երկարօրյա ուսուցման խմբակներում աշակերտների ընդգրկման համար հիմք են հանդիսացել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, որտեղ սահմանված է, որ 2-3-րդ դասարաններից ընդգրկվում են այն աշակերտները, որոնք ունեցել են առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ, իսկ 5-8-րդ դասարաններից այն աշակերտները, որոնք երկու անգամ անընդմեջ ունեցել են 1-3 գնահատական: Զեկուցողը հավելեց, որ իր և տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանի կողմից պարբերաբար իրականացվել են ընթացիկ դիտարկումներ և իրականացված աշխատանքները գոհացուցիչ են:

Արտահայտվեցին՝ Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները
Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, անդրադարձան իրականացման ընթացքում առաջացած խնդիրներին, ձեռքբերումներին ու արդյունքներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 13. Մեթոդական զեկուցում «Գնահատում, ամփոփիչ միավորային գնահատում, նպատակը, ձևերը, տեսակները, ԿԱՊԿՈՒ սովորողի միավորային

գնահատման առանձնահատկությունները» թեմայով հետազոտական աշխատանքի ներկայացման մասին։

(զեկուցող՝ Հ. Ալավերդյան)

Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստում աշխարհագրության ուսուցչուհի Հերմինե Ալավերդյանը հանդես եկավ նշված հետազոտական աշխատանքի մասին զեկույցով։ Զեկուցման մեջ մանրամասն ներկայացված էր ուսումնական գործընթաին ներկայացվող նոր բարեփոխված մեթոդներն ու ձևերը, սովորողի ուսումնական գործունեության, առաջադիմության ընթացքի արձանագրումը, թերացումների բացահայտումն ու շտկումը։

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամներ։ Նրանք նշեցին զեկուցման մեջ ներկայացված մեթոդների և ձևերի արդիականությունն ու կարևորությունը, հատկապես նոր ՀՊՉ-ներով ճիշտ գնահատելու գործընթացում։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել Հ. Ալավերդյանի կողմից ներկայացված Գնահատում, ամփոփիչ միավորային գնահատում, նպատակը, ձևերը, տեսակները, ԿԱՊԿՈՒ սովորողի միավորային գնահատման առանձնահատկությունները» հետազոտական աշխատանքը։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №6

«27» հունվարի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Մարինե Բաբայան
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ՕԹՊ-ների ժամկետների լրացման աշխատանքների կատարման մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
4. Դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի մասնակիցների արդյունքների քննարկման մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
5. Օրվա դասի պլանների, լրացման աշխատանքների և խնդիրների մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
6. Էլեկտրոնային մատենավարության աշխատանքների ստուգում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
7. ԱՈՒՊ-ների և դիտարկման թերթիկների լրացման աշխատանքների մասին:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
8. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում նախատեսված նախագծային աշխատանքների, բաց դասերի, դաս միջոցառումների մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
9. 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ՕԹՊ-ների լրացման աշխատանքների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասացուցակներում կատարվել են որոշ փոփոխություններ, որոնք հաշվի են առնվել ՕԹՊ-ների ժամկետների լրացման ժամանակ: Զեկուցողը հավելեց, որ որոշ փոփոխություններ նաև կապված են 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ոչ աշխատանքային օրերի հետ: Հաստատված ՕԹՊ-ներով իրականացվում է 2-րդ կիսամյակի մատենավարությունը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Մեթոդմիավորման անդամները նշեցին, որ ՕԹՊ-ներում թեմատիկ հաջորդականության փոփոխությունները կապված են 2-րդ կիսամյակի ընթացքում ոչ աշխատանքային օրերի հետ, շեշտելով, որ այլ նպատակով թեմատիկ հաջորդականության մեջ փոփոխություններ չեն կատարվել: Արտահայտվողները նշեցին, որ բոլոր ՕԹՊ-ներում ամսաթվերը պատշաճ լրացրել են

Որոշեցին՝ 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ՕԹՊ-ների լրացման աշխատանքների կատարման մասին ինֆորմացիան ընդունել ի գիտություն:

Լսեցին 4. Դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի մասնակիցների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ դպրոցական փուլին մասնակցությունը եղել է բավականին բարձր, հատկապես 5-րդ և 6-րդ դասարաններում մաթեմատիկա առարկայից: Մասնակիցները քիչ էին հատկապես բնագիտական առարկաներից, որոնք չեն հաղթահարել անցողիկ շեմը: 5-8-րդ դասարանների 15 աշակերտ «Մաթեմատիկա» առարկայից մասնակցել է մարզային փուլին, սակայն, ցավոք, արդյունքներ չեն գրանցել: Զեկուցողը հավելեց, որ օլիմպիադաներին մասնակցող աշակերտների հետ պետք է ավելի շատ նախապատրաստական աշխատանքներ կատարել և անպայման ընտրել տվյալ առարկայից ավելի օժտված աշակերտների:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Ա. Զեյնալյանը:

Արտահայտվողները նշեցին, որ աշակերտներն իրենք են մասնակցելու ցանկություն հայտնել, շեշտելով, որ 5-րդ և 6-րդ դասարաններում

մասնակցությունը նաև փորձի ձեռքբերում է, պարզապես պետք է բացառել արտագրությունները։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի մասնակիցների արդյունքների քննարկման մասին ինֆորմացիան։

Լսեցին 5. Օրվա դասի պլանների, լրացման աշխատանքների և խնդիրների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարում օրվա դասի պլանները լրացվում են ըստ սահմանված կարգի, շեշտեց, որ այս հարցի մասին խոսվել է նաև առաջին կիսամյակի ընթացքում, նշելով, որ 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում օրվա դասի պլանները կազմվում են ըստ նոր ՀՊՉ-ների պահանջների։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ տարվա աշխատաներն օգնում են, որպեսզի 2024-2025 ուսումնական տարվա համար օրվա դասի պլանների կազմումը լինի ավելի դյուրին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն օրվա դասի պլանների, լրացման աշխատանքների և խնդիրների մասին տեղեկատվությունը։

Լսեցին 6. Էլեկտրոնային մատենավարության աշխատանքների ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ստուգման արդյունքները ցույց տվեցին, որ դասամատյանները լրացվել են առանց էական թերությունների։ Զեկուցողը հավելեց, որ նախորդող մեկ ամսվա ընթացքում ուսուցիչների կողմից պատշաճ իրականացվել է մատենավարությունը և երկրորդ կիսամյակի ընթացքում նույնպես էական թերություններ չեն արձանագրվել։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները նշեցին, որ հետևողական աշխատանքներն օգնում են ուսուցիչներին բարելավել իրենց կարողությունները էլեկտրոնային մատենավարության հարցում։

Արտահայտվողների կողմից կարևորվեց ամենօրյա գրանցումների կատարումը, քանի որ այդ դեպքում նվազում է անճշտություններ թույլ տալու հավանականությունը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը, շարունակել վերահսկողությունը։

Լսեցին 7. ԱՈՒՊ-ների և դիտարկման թերթիկների լրացման աշխատանքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, ինչպես նաև դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան, շեշտեց, որ աշխատանքները կատարվել են սահմանված պահանջներին համապատասխան։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը, ՕԴՊ-ով սահմանված

նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում և դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին զեկուցումը։

Լսեցին 8. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում նախատեսված նախագծային աշխատանքների, բաց դասերի, դաս միջոցառումների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախագծային աշխատանքների, ինչպես նաև բաց դասերի, դաս միջոցառումների թեմաներն ու ժամկետները, հորդորեց, որպեսզի աշակերտների հետ աշխատեն սահմանված ժամկետներում։ Հատկապես նախագծային աշխատանքների իրականացման ընթացքում աշակերտները պետք է դրսևորեն ինքնուրույնություն, ուսուցիչները պետք է լինեն միայն ուղղորդողի դերում։ Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է հաշվի առնել նախորդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքները, պարտադիր շտկեն թերությունները և ավելի ճիշտ աշխատեն հատկապես պրոդուկտի ներկայացման հարցում։ Զեկուցողը նշեց, որ բաց դասերը և դաս միջոցառումները պետք է ավելի հագեցած լինեն նոր մեթոդների և ՏՀՏ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև այդ դասերը պետք է տարբերվեն ընթացիկ դասերից։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ հաշվի կառնեն նկատառումները կապված նախագծային աշխատանքների իրականացման հետ, ինչպես նաև բաց դասերը կիրականացնեն նոր մեթոդների և ՏՀՏ միջոցների կիրառմամբ։

Որոշեցին՝ 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում նախատեսված նախագծային աշխատանքների, բաց դասերի, դաս միջոցառումների մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։

Լսեցին 9. 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց նոր չափորոշիչների ներդրման ընթացքում նախորդող ժամանակահատվածում ի հայտ եկած խնդիրները, նշեց, որ որոշման համաձայն վերահսկողության արդյունքները պետք է քննարկվեն հաճախակի, միևնույն ժամանակ հավելեց. քանի որ ընթացքում ուսուցիչների մոտ հարցեր են առաջանում, ապա անհրաժեշտ է համարում այս նիստի ընթացքում նույնպես քննարկել նոր ՀՊՉ-ների ներդրման հետ կապված հարցերը և ընդունել որոշումներ՝ հետագա աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար։ Զեկուցողը նաև կարևորեց 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում կատարված դասալսումների և քննարկումների արդյունքում բարձրաձայնվող հարցերի շուրջ տրվող պարզաբանումները։ Զեկուցողն առաջարկեց կիրառել 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում նախորդ տարի ներդրված ՀՊՉ-ների ներդրման գործընթացը, քանի որ շատ հարցերում նախորդ տարվա փորձի կիրառումը արդյունավետ է և օգտակար։

Արտահայտվեցին՝ Ա. Դաջունցը

Անուշ Դաջունցը նշեց, որ նոր չափորոշչային դասարաններում խնդիրներ հիմնականում լինում են գնահատման նոր սկզբունքների հետ կապված, սակայն դրանք ի տարբերություն նախորդ ուսումնական տարվա շատ քիչ են և էական ազդեցություն չեն թողնում ընդհանուր պատկերի վրա։ Գնահատման նոր սկզբունքների շուրջ տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանի կողմից

իրականացված քննարկումների, պարզաբանումների արդյունքում շտկվել են բոլոր այն բացթողումները, որոնք արձանագրվել էին նախորդ ուսումնական տարվա ընթացքում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին ինֆորմացիան:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №7

«25» փետրվարի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Մարինե Բաբայան
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Օրացուցային-թեմատիկ պլաններում կատարվող փոփոխությունների մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. Էլեկտրոնային դասամատյանների ստուգման արդյունքների մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
6. Բնագիտական առարկաներից և ԹԳՀԳ-ից փնջային աշխատանքների նախապատրաստման մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստման մասին հարցը:

(զեկուցող՝Ա. Առստամյան)

Զեկուցողը առաջարկեց, որ 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում 5-6-րդ դասարաններում «Մաթեմատիկա», 7-9-րդ դասարաններում «Հանրահաշիվ» առարկաներից տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքները տալ նոր սկզբունքով՝ էլեկտրոնային եղանակով: Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային տարբերակով աշխատելու սկզբունքները, խոսեց այն մասին, որ աշակերտներն աշխատելու են թղթերի վրա, սակայն արդյունքները փոխանցելու են էլեկտրոնային տարբերակով կազմված թեստերի մեջ: Նշեց, որ թեստերը կազմված են լինելու 10 հարցից, որոնցից յուրաքանչյուրն ունենալու է 1 միավորի կշիռ: Թեստերի հարցերից յուրաքանչյուրն ունենալու է ճիշտ և սխալ պատասխաններ, որոնցից աշակերտը պետք է ընտրություն կատարի: Աշխատանքն ամփոփելուց հետո, երբ աշակերտը սեղմի ուղարկել կոճակը, կարող է տեսնել գրավոր աշխատանքի արդյունքը: Զեկուցողը նշեց նաև, որ 5-րդ դասարաններում փորձնական եղանակով այս սկզբունքով տրվել են գրավոր աշխատանքներ և աշակերտները մեծ ոգևորությամբ իրականացրել աշխատանքը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները նշեցին, որ էլեկտրոնային տարբերակով տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ գրելը դպրոցում նորություն է, սակայն շեշտեցին, որ իսկապես աշակերտները փորձնական տարբերակի վրա մեծ ոգևորությամբ են աշխատել: Նշեցին, որ դրանում իր ազդեցությունն է թողել նաև այն հանգամանքը, որ աշակերտները հնարավորություն են ստանում անմիջապես տեղում տեսնել իրենց աշխատանքի արդյունքները:

Որոշեցին՝ 1. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքները տալ նոր սկզբունքով՝ էլեկտրոնային տարբերակով:

2. Թեստերը կազմել քննարկված պահանջներին համապատասխան:

Լսեցին 4. Օրացուցային-թեմատիկ պլաններում կատարվող փոփոխությունների մասին հարցը:

(զեկուցող՝Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի 2025 թվականի փետրվարի 21-ին գրության համաձայն եղանակային անբարենպաստ պայմաններից ելնելով հանրապետության դպրոցներում դասերը չեղարկվել են՝ կիսամյակի ընթացքում լրացնելու պայմանով: Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ և տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանի հարամանով փետրվարի 21-ի դասերը տեղափոխվել են 2025 թվականի մարտի 1-ը: Այս

ամենի հետ կապված անհրաժեշտություն է առաջացել ժամկետների փոփոխություն կատարել ՕԹՊ-ներում և խիստ հետևել կատարված փոփոխություններին՝ էլեկտրոնային մատենավարության աշխատանքների կազմակերպման ժամանակ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է նախատեսվող փոփոխությունները սեղմ ժամկետներում իրականացնել, որպեսզի մատենավարության ընթացքում բացթողումներ և սխալներ չառաջանան:

Որոշեցին՝ ՕԹՊ-ների փոփոխության մասին տեղեկատվություն ընդունել ի գիտություն:

Լսեցին 5. Էլեկտրոնային դասամատյանների ստուգման արդյունքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ էլեկտրոնային դասամատյաններում կատարված աշխատանքները պարբերաբար ստուգվում են: Առկա են որոշ թերություններ, անհրաժեշտ է ամփոփիչ աշխատանքների գնահատականները հնարավորինս շուտ փոխանցել, որպեսզի դրա հիման վրա դասղեկները տրամադրեն տվյալ ամսվա ընթացքում երկարօրյա խմբերում ընդգրկվող աշակերտների ցանկը: Մանրակրկիտ և անթերի լրացնել էլեկտրոնային դասամատյանների համապատասխան բաժինները՝ հետագա անճշտություններից խուսափելու համար:

Արտահայտվեցին՝ Ս.Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը, Ս. Ավանեսյանը

Նրանք նշեցին, որ գնահատականների փոխանցումը մի քիչ ձգձգվում է բացակայող աշակերտների պատճառով:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների կողմից աշխատանքի բարեխիղճ կատարումը, նշեց, որ միշտ պատրաստ է աջակցել ուսուցիչներին արձանագրված թերությունները, բացթողումները շտկելու ուղղությամբ: Կարևորեց, որ մատենավարությունը կազմակերպվի թեմատիկ հաջորդականությանը համապատասխան և շեշտեց, որ համաձայն է զեկուցողի հետ, որ 2024-2025 ուսումնական տարում բացթողումներն անհամեմատ քիչ են, իսկ վարչական միջամտություններ առհասարակ չեն կատարվել:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքները ընդունել ի գիտություն և սեղմ ժամկետներում նկատված թերությունները վերացնել:

Լսեցին 6. Բնագիտական առարկաներից և ԹԳՀԳ-ից փնջային գրավոր աշխատանքների նախապատրաստման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Հաշվի առնելով նոր ՀՊՉ-ներով գնահատման առանձնահատկությունները, հատկապես բնագիտական առակաների մասին ավելի համընդհանուր պատկերացում կազմելու համար, 7-րդ և 8-րդ դասարաններում նպատակահարմար է տնօրենության կողմից տալ փնջային գրավոր աշխատանքներ (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն և ԹԳՀԳ առարկաներից) 2 դասաժամ կամ ըստ անհրաժեշտության 3 դասաժամ տևողությամբ: Այս նախաձեռնությամբ նախատեսվում է առարկայական գիտելիքի ստուգումն իրականացնել հետևյալ առարկայափնջերով.

- Անգլերեն, Ֆրանսերեն, Ռուսաց լեզու (8-րդ դասարան),
- Երաժշտություն, Կերպարվեստ (7-րդ դասարան),
- Ֆիզիկա, Քիմիա, Աշխարհագրություն, Կենսաբանություն, ԹԳՀԳ (7-8-րդ դասարան),
- Գրականություն, Հայաստանի պատմություն (7-9-րդ դասարան):

Զեկուցողը առաջարկեց, գրավոր աշխատանքները տալ նոր սկզբունքով՝ էլեկտրոնային եղանակով: Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային տարբերակով աշխատելու սկզբունքները, խոսեց այն մասին, որ աշակերտներն

աշխատելու են թղթերի վրա, սակայն արդյունքները փոխանցելու են էլեկտրոնային տարբերակով կազմված թեստերի մեջ: Նշեց, որ թեստերը կազմված են լինելու յուրաքանչյուր առարկայից 10 հարցից, որոնցից յուրաքանչյուրն ունենալու է 1 միավորի կշիռ: Թեստերի հարցերից յուրաքանչյուրն ունենալու է ճիշտ և սխալ պատասխաններ, որոնցից աշակերտը պետք է ընտրություն կատարի: Աշխատանքն ամփոփելուց հետո, երբ աշակերտը սեղմի ուղարկել կոճակը, կարող է տեսնել գրավոր աշխատանքի արդյունքը:

Արտահայտվեցին՝ Հ. Օհանյանը, Մ. Բաբայանը

Հայկ Օհանյանը նշեց, որ աշակերտների համար որոշակի դժվարություն կլինի միաժամանակ բոլոր առարկաների վրա աշխատել:

Մարինե Բաբայանը նշեց, որ եթե այս փորձնական աշխատանքը արդյունավետ լինի, այն կարելի կլինի կիրառել հետագայում:

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնական տարվա ընթացքում իրականացվող ուսումնական առարկաների դրվածքի ուսումնասիրության արդյունքներն ամփոփ ներկայացնելու համար և փաստացի եզրահանգումներ կատարելու համար նպատակահարմար է տնօրենության կողմից իրականացվող գնահատման այս եղանակը: Ամփոփիչ գրավոր աշխատանքների այս ձևաչափը ողջունելի է նաև այն իմաստով, որ այն կբարձրացնի սովորողների պատասխանատվության զգացումը և խթանիչ հանգամանք կհանդիսանա կրթության որակի բարելավման համար:

Որոշեցին՝ 7-9-րդ դասարաններում առարկայափնջերով տալ թեստային գրավոր աշխատանքներ՝ հետևյալ առարկաներից.

- Ֆիզիկա, Քիմիա, Աշխարհագրություն, Կենսաբանություն, ԹԳՀԳ (7-8-րդ դասարան):

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №8

«24» մարտի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Մարինե Բաբայան
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. Էլեկտրոնային դասամատյաններում ստուգման արդյունքների մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
4. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կողմից կատարված դասալսումների մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
5. Օրվա դասի պլանների մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
6. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ մարտ ամսում կատարված աշխատանքների մասին:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգի հաստատման հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը։

Լսեցին 3. Էլեկտրոնային դասամատյաններում ստուգման արդյունքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ էլեկտրոնային դասամատյանների հեշտ լրացման և ճիշտ ու ժամանակին գնահատման հարցը շատ կարևոր է և գտնվում է տնօրինության ու մեթոդմիավորման ուշադրության կենտրոնում։ Անհրաժեշտ է գնահատումները ճիշտ և ժամանակին կատարել՝ 9-րդ դասարաններում ընթացիկ գնահատականները եռօրյա ժամկետում, 5-8-րդ դասարաններում ամփոփիչ գնահատականներն ու 9-րդ դասարաններում թեմատիկ ամփոփիչ ու գործնական աշխատանքների գնահատականները հնգօրյա ժամկետներում։ Ըստ ՕԹՊ-ների մինչև մարտի 21-ը գնահատումները մեծամասամբ կատարված են, կան որոշ թերացումներ, հատկապես 9-րդ դասարաններում ընթացիկ գնահատականները քիչ են։ Զեկուցողը նշեց, որ եթե օգտվում են նախորդ տարվա աշխատանքներից՝ ամփոփիչ գրավոր և թեմատիկ գրավոր աշխատանքներում, ապա պետք է կատարել համապատասխան ուղղումներ։

Զեկուցողը հավելեց, որ «ԹԳՀԳ» առարկայից տրվող թեմատիկ ամփոփիչ աշխատանքները տրվում են «Google Forms» հարթակում, որն ավելի հարմար և արագ տարբերակ է։

Արտահայտվեցին՝ Օլ. Ղուլյանը, Ա. Առստամյանը

Օլյա Ղուլյանը նշեց, որ նշված տարբերակով ամփոփիչ աշխատանքը կատարելով, «Google Forms»-ում աշակերտները կարողանում են տեսնել իրենց աշխատանքի արդյունքները, ինչը նրանց էլ ավելի է ոգևորում։

Արտահայտվողը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից։ Մեկ անգամ ևս հիշեցրեց մատենավարության վարման կարգը, հորդորեց լինել ուշադիր գրավոր աշխատանքների արդյունքների և գրանցումների հարցում, համոզվել, որ կատարված գրանցումն ու փոխանցված արդյունքները ճիշտ են պահպանված։ Կատարել համապատասխան դիտողություններ և հիշեցումներ մատենավարության վարման կարգի վերաբերյալ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն էլեկտրոնային մատենավարության ընթացիկ ստուգման արդյունքները։

Լսեցին 4. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման և տնօրինության կողմից կատարված դասալսումների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ դասալսումները մեթոդմիավորման աշխատանքներում կարևոր տեղ ունեն։ Քանի որ 5-8-րդ դասարաններում դասամատյաններում միավորային գնահատվում են միայն ամփոփիչ աշխատանքները, դասապրոցեսում պետք է ուշադրություն դարձնել հայտորոշիչ ու ձևավորող գնահատումներին և կիրառել հարցման նոր մեթոդներ։ Զեկուցողը հավելեց, որ դասալսումները ցույց են տալիս, որ ուսուցիչներն այդ ուղղությամբ բավականին մեծ աշխատանքներ են կատարում։ Հաշվի են առնվում ԿԱՊԿՈՒ աշակերտների կարողությունները և նրանց տրվում են ԱՈՒՊ-ներին

համապատասխան աշխատանքներ։ Աշակերտները մեծամասամբ ներգրավված են դասապրոցեսում։ Համեմատաբար քիչ են փոխադարձ դասալսումները, որն էլ պայմանավորված է ուսուցիչների ծանրաբեռնվածությամբ։

Արտահայտվեցին՝ Հ. Օհանյանը

Հայկ Օհանյանը նշեց, որ կարելի է մեթոդներ կիրառել բնագիտական առարկաները, հատկապես ֆիզիկան, ավելի շատ աշակերտների համար առավել հետաքրքիր դարձնելու ուղղությամբ։

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման և տնօրինության կողմից կատարված դասալսումների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն։

Լսեցին 5. Օրվա դասի պլանների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ matyan.emis.am համակարգի թեմատիկ պլանների բաժնում արդեն հասանելի են նոր «Դասի ընդլայնված պլան (տարակարգի համար)» և «Գործողություն» հատվածները։ Ավելի վաղ մատյանում ավելացել էր նաև դասի նպատակի և վերջնարդյունքի հատվածները։ Էլեկտրոնային մատյանում այս 4 հատվածների ավելացումն ուսուցիչներին հնարավորություն է տալիս անմիջապես համակարգում լրացնել դասի պլանը և լրացուցիչ աշխատանք չկատարել։ Համակարգում դասի պլանի մեջ դասի նպատակը, վերջնարդյունքը, խնդիրները լրացվում են ինքնաշխատ եղանակով՝ թեմատիկ պլաններից համապատասխան մասերը ներբեռնվում են դասի պլանի մեջ, իսկ «Դասի ընդլայնված պլան (տարակարգի համար)» և «Գործողություն» հատվածներն ուսուցիչները պետք է ըստ անհրաժեշտության լրացնեն, ինչը հնարավորություն է տալիս լրացումները պահպանել նաև հաջորդ ուսումնական տարիների համար, սակայն շեշտեց, որ համակարգում այս պահին առկա են որոշ խնդիրներ և այն որոշակի կերպով խառնում է գրվածքը, ինչը, ենթադրաբար առաջիկայում կշտկվի։ Զեկուցողը նշեց նաև, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկի նոր խմբագրությունում առկա չէ ուսուցչի կողմից թղթային տարբերակով դասի պլան գրելու անհրաժեշտություն, ինչը ևս մեկ քայլ է ուսուցիչների աշխատանքը թեթևացնելու ուղղությամբ։ Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև տարակարգի համար դիմող ուսուցիչներին, նշեց, որ այսուհետ նրանք նույնպես կարգով սահմանված դասի պլանները կարող են լրացնել իրենց էլեկտրոնային մատյաններում, ինչը հեշտացնում է փաստաթղթերի լրացումը և ուղարկում։ Զեկուցողը հավելեց, որ 2023-2024 ուսումնական տարում բոլոր ուսուցիչները ներկայացրել են իրենց օրվա դասի պլանները, որոնք առկա են ուսումնական մասում՝ էլեկտրոնային տարբերակով։ Առկա են նաև 2024-2025 ուսումնական տարվա համար գրված որոշ ուսուցիչների օրվա դասի պլանները, իսկ որոշներինն էլ գրված է մասնակի՝ 1-ին կիսամյակի համար կամ մինչև փետրվար-մարտ ամիսներ։ Զեկուցողը նշեց նաև դասի խնդիրների ձևակերպման մասին, շեշտեց, որ դրանք դասի պլաններում պետք է արտացոլված լինեն։

Հաշվի առնելով վերոգրյալը, զեկուցողն առաջարկեց 2024-2025 ուսումնական տարվանից սկսած դասի պլանները լրացնել էլեկտրոնային մատյանում դրա համար սահմանված բաժիններում։

Արտահայտվեցին՝ Ա. Մարտիրոսյանը, Ս. Ավանեսյանը

Արփինե Մարտիրոսյանը նշեց, որ իրենք արդեն ունեն ՕԹՊ-ները, որոնց մեջ սահմանված են նպատակներն ու վերջնարդյունքները, և բոլոր ուսուցիչներն առաջնորդվում են դրանցով, իսկ emis.am համակարգի նոր փոփոխությունները

հնարավորություն կտան ուսուցիչներին լրացնել օրվա դասի պլանների ընդլայնված տարբերակները։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ՕԹՊ-ների մեջ նպատակների և վերջնարդյունքների առկայությունը, իսկ այսուհետ նաև յուրաքանչյուր դասի խնդրի ձևակերպման անհրաժեշտությունն ու «Դասի ընդլայնված պլան (տարակարգի համար)» և «Գործողություն» հատվածների լրացումը, ինչը թույլ կտա ճիշտ պլանավորել և արդյունավետ իրականացնել դասապրոցեսը, իսկ ուսուցչին կազատի կրկնակի աշխատանք կատարելու պարտադրանքից։

Որոշեցին՝ Մանկավարժական խորհրդի նիստում առաջարկել 2024-2025 ուսումնական տարվանից սկսած դասի պլանները լրացնել էլեկտրոնային մատյանում դրա համար սահմանված բաժիններում։

Լսեցին 6. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ մարտ ամսում կատարված աշխատանքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ ըստ պլանավորված աշխատանքային գրաֆիկի բոլոր աշխատանքները կատարված են, ԱՈՒՊ-ները լրացված։ Առաջնորդվում են ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգով, համագործակցում են ԳՏՄԱԿ-ի հետ։

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը

Արաքսյա Առստամյանը կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը, ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում և դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը։

Որոշեցին՝ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ մարտ ամսում կատարված աշխատանքների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №9

«28» ապրիլի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Մարինե Բաբայան
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Էլեկտրոնային դասամատյանների ստուգման արդյունքների մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
5. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
6. 9-րդ դասարանների ավարտական քննությունների քննական տոմսերի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
7. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատել:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
8. 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգի հաստատման հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում առաջին անգամ դպրոցում տնօրենության կողմից գրավոր աշխատանքները տրվում են էլեկտրոնային տարբերակով: Այս սկզբունքով առարկայական գիտելիքի ստուգումն իրականացվել է ոչ միայն «Մայրենի» («Հայոց լեզու») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ») առարկաներից, այլ նաև հետևյալ առարկայափնջերով.

- 8-րդ դասարաններում՝ «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Ռուսաց լեզու»
- 7-րդ դասարաններում՝ «Երաժշտություն», «Կերպարվեստ»
- 7-8-րդ դասարաններում՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «ԹԳՀԳ»
- 7-9-րդ դասարաններում՝ «Գրականություն» և «Հայաստանի պատմություն»:

Զեկուցողը հիշեցրեց էլեկտրոնային տարբերակով աշխատելու սկզբունքները, խոսեց այն մասին, որ աշակերտներն աշխատել են իրենց խելախոսներով (սմարթֆոններով), ինչը զգալիորեն կրճատել է ժամանակը, որն անհրաժեշտ էր առաջադրանքները լուծելու և դրանք թղթային ձևաթղթերում գրանցելու համար: Այս նոր մոտեցումը հնարավորինս նվազեցրել է տեխնիկական սխալների և անճշտությունների հավանականությունը: Միևնույն ժամանակ, այն խթանել է աշակերտների՝ տեղեկատվական տեխնոլոգիաները կրթական նպատակով օգտագործելու հմտությունների զարգացումը: Գրավոր աշխատանքն ավարտելուց հետո աշակերտներն անմիջապես տեսել են իրենց գնահատականները, ինչպես նաև ճիշտ ու սխալ պատասխանները: Անհրաժեշտության դեպքում դպրոցն աշակերտներին ապահովել է համապատասխան սարքավորումներով և ինտերնետ հասանելիությամբ: Էլեկտրոնային եղանակով գրավոր աշխատանքների անցկացումը նպատակ ուներ արդիականացնել գնահատման գործընթացը, խթանել աշակերտների թվային հմտությունների զարգացումը և բարձրացնել կրթական գործընթացի արդյունավետությունը: Այս նախաձեռնությունը կարևոր քայլ է դեպի ժամանակակից և թվայնացված կրթական միջավայր՝ նպաստելով աշակերտների թվային գրագիտության զարգացմանն ու կրթական արդյունքների բարելավմանը:

Զեկուցողն անդրադարձավ գրավոր աշխատանքների սահմանված կարգով տրվելուն և արդյունքների ամփոփմանը: Ներկայացրեց տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները, մասնավորապես, կանգ առավ տեղ գտած ակնառու թերությունների վրա:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, ՄՄ անդամները։

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է համարում նախապատրաստական աշխատանքների արդյունքում կիրառել այնպիսի մեթոդներ ու հնարներ, որ ապահովվի անկողմնակալ վերաբերմունքը։ Ավանեսյանը կարևոր համարեց աշակերտների հետ լրացուցիչ աշխատանքը, ինչպես նաև հիմք ընդունելով գրավոր աշխատանքների արդյունքները, դրանց հիման վրա ընթացիկ աշխատանքային պլանների մշակում՝ կրթության որակի բարելավման ուղղությամբ։

Արտահայտվողները նշեցին նաև այն մասին, որ էլեկտրոնային տարբերակով տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ գրելը դպրոցում նորություն է, առաջադրանքների այս տեսակը հնարավորություն է տալիս իրականացնել գիտելիքների բազմակողմանի ստուգում, ինչպես նաև աշակերտներին սովորեցնում է աշխատել թեստերի հետ՝ էլեկտրոնային տարբերակով։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը)։

Լսեցին 4. Էլեկտրոնային դասամատյանների ստուգման արդյունքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ էլեկտրոնային դասամատյանների ճիշտ և անթերի լրացման հարցը տնօրենության ուշադրության կենտրոնում է։ Աշխատանքը կատարվում է աչալուրջ կերպով, մեծ ուշադրություն է հատկացվում ճիշտ ու հիմնավորված գնահատմանը, նոր ՀՊՉ-ներով դասարաններում միավորային գնահատումը ամփոփիչ աշխատանքներով, բոլոր սովորողները անպայման պետք է գնահատված լինեն, կրկին ետ վերադառնալ ու ստուգել, որպեսզի տարբեր պատճառներով՝ թույլ ինտերնետային կապ և այլն, սովորողներն առանց համապատասխան գնահատականների չմնան։ Ուշադրություն դարձնել նաև ՕԹՊ-ների հետ համապատասխանությանը, անպայման ճշտել, ապա նոր լրացնել, այդ թվում նաև տնային աշխատանքների բաժինը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ խնդիրներ են առաջանում ներբեռնման ժամանակ, երբ երկու թեմաները միացվում են։ Դրա վերաբերյալ Սերգեյ Ավանեսյանի կողմից տրվել են համապատասան ցուցումներ, որպեսզի ՕԹՊ-ների հետ կապված շեղումներ չլինեն։

Արտահայտվողները նշեցին նաև, որ անհրաժեշտ է հետևել տրված ցուցումներին և գրանցումներն ու գնահատումը կատարել սահմանված կարգով և ժամկետներում, ինչպես նաև խստագույն պահպանել ՕԹՊ-ով սահմանված թեմատիկ հաջորդականությունը։

Որոշեցին՝ Զեկուցման մեջ նշված նկատառումները և տնօրենության կողմից առաջարկված ուղղումներն ընդունել ի գիտություն և առաջնորդվել։

Լսեցին 5. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը։

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը։

Արտահայտվողները նշեցին, որ 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմում առաջադրվել են բոլոր ցանկացողները, ինչպես նաև հաշվի են առնվել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջները, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի փետրվարի 22-ի №10 և 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 495-Ա/2 հրամանները:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը (կցվում է):

Լսեցին 6. 9-րդ դասարանների ավարտական քննությունների քննական տոմսերի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ «Մաթեմատիկա» առարկայից և բնագիտական առարկաներից («Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն»՝ ընտրովի) ուսուցիչները հարցաշար չեն կազմում: Համապատասխան առարկաների ուսուցիչները սովորողների հետ և՛ դասերի ընթացքում, և՛ լրացուցիչ աշխատանքներ պետք է կատարեն, որպեսզի սովորողները կարողանան ավելի պատրաստ ներկայանալ քննություններին:

Արտահայտվեցին՝ Քննական առարկաները դասավանդող ուսուցիչները:

Արտահայտվողները նշեցին, որ աշակերտների հետ պետք է աշխատանքներ իրականացնել անհրաժեշտ որակ ապահովելու նպատակով:

Արտահայտվողները նշեցին, որ կրկնությունների ժամանակ աշխատում են նախորդ ուսումնական տարվա ընթացքում կիրառված հարցատոմսերի օրինակներով, ինչպես նաև խորհրդատվությունների ժամանակ օգտագործում են այլ գրականություն, ինչը պետք է որ նմաստի աշակերտների կողմից քննությունների ընթացքում պատշաճ առաջադիմության և որակի գրանցմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 9-րդ դասարաններում բնագիտամաթեմատիկական առարկաների քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին զեկուցումը:

Լսեցին 7. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ «Բ» դասարանի աշակերտներ Արեն Ասատրյանի, Լևոն Հայրապետյանի ծնողները դիմում են ներկայացրել, որով խնդրել են իրենց երեխային ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը

Արտահայտվողը նշեց, որ Արեն Ասատրյանի, Լևոն Հայրապետյանի ծնողների դիմումի համաձայան նրանց պետք է ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ աշակերտներն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ,

կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

Որոշեցին՝ Համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի՝ ԿԱՊԿՈՒ աշակերտներ Արեն Ասատրյանին, Լևոն Հայրապետյանին ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից:

Լսեցին 8. 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը կարևորեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները՝ կապված ՀՊՉ ներդրման գործընթացի հետ: Նշեց, որ կատարած դիտարկումները, քննարկումներն ու դասալսումները միայն դրական նշանակություն և մեծ աջակցություն եղան 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար: Զեկուցողի կողմից նշվեց երկամյա ամփոփումների կարևորության մասին: Նախապես պլանավորված աշխատանքների կազմակերպման ընթացքում պարզ դարձան այն արդյունքներն ու հաջողությունները, որոնք արձանագրվեցին տարեվերջին: Միայն կազմակերպված քննարկումների, դասալսումների և տրամադրվող խորհրդատվությունների արդյունքում հնարավոր եղավ հասնել դրական արդյունքի:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում կատարված դասալսումների արդյունքների քննարկումների ժամանակ վեր հանված խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ իրականացված տրամադրվող խորհրդատվությունները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին զեկուկույցը:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ *ԱՐՏԱՀԵՐԹ*ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10

«13» մայիս 2025թ. ք. Գորիս

<u>Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝</u>

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Մարինե Բաբայան
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման արտահերթ նիստի օրակարգը:

Լսեցին 2. 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարում դպրոցի 9-րդ դասարանների աշակերտները քննություն են հանձնելու «Մաթեմատիկա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Քիմիա», «Ֆիզիկա» առարկաներից: Զեկուցողը հավելեց, որ քննությունների ժամանակացույցը կազմվել է հաշվի առնելով ԿԳՄՍ նախարարի հրամանը, ինչպես նաև ԳԹԿ-ի կողմից հաստատված ժամանակացույցը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2024-2025 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №11

«27» մայիսի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ՄԿԱ գծով համակարգող Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցողներ՝ Ա. Դաջունց, նախագծային աշխատանքների ղեկավարներ)
4. 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
5. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
6. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբերի հաշվետվությունների քննարկման մասին:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգի հաստատման հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում և կարգով:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ա. Դանջունց, նախագծային աշխատանքների ղեկավարներ)

Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունցը հանդես եկավ զեկուցումով՝ ներկայացնելով մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից իրականացված նախագծային աշխատանքները: Նախագծերին մասնակցել էին 7-րդ «Ա», «Բ», «Գ» և 8-րդ «Ա», «Բ», «Գ» դասարանների աշակերտները՝ Բնագիտություն, Տեխնոլոգիա, Ճարտարագիտություն և Մաթեմատիկա (ԲՏՃՄ) ուղղվածությամբ:

Ներկայացված նախագծերը բազմաբովանդակ էին, հետաքրքիր և ուսուցողական՝ ընդգրկելով թե՛ տեսական գիտելիքների կիրառություն, թե՛ փորձարարական մոտեցումներ: Զեկուցողը մասնավորապես շեշտեց միջառարկայական նախագծերի կարևորությունը, որոնք խթանում են աշակերտների վերլուծական մտածողությունը, ստեղծագործականությունը և համագործակցության հմտությունները: Այդպիսի նախագծերը աչքի էին ընկնում բովանդակային հագեցվածությամբ և կիրառական ուղղվածությամբ:

Բավականին տպավորիչ էին նաև նախագծային աշխատանքների տեսանելի արդյունքները՝ պրոդուկտները, որոնք վկայում էին աշակերտների ակտիվ ներգրավվածության և ուսուցիչների մասնագիտական ուղեկցման մասին: Նախագծերի ղեկավար ուսուցիչները հանգամանալից ներկայացրին իրենց կատարած աշխատանքների ընթացքը, կիրառված մեթոդներն ու մոտեցումները: Քննարկումների ընթացքում անդրադարձ եղավ նաև մի շարք կազմակերպչական ու բովանդակային հարցերի, որոնք առաջացել էին նախագծերի իրականացման ժամանակ:

2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում իրականացված այս նախագծային աշխատանքները ևս մեկ անգամ փաստեցին, որ ԲՏՃՄ ուղղվածությամբ կազմակերպված նախաձեռնությունները կարող են նպաստել սովորողների բազմակողմանի զարգացմանը և հետաքրքրության աճին բնագիտական ոլորտների նկատմամբ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Մեթոդմիավորման անդամները կարևորեցին նախագծային աշխատանքների կազմակերպչական փուլերի դերը՝ ընդգծելով, որ հենց այդ փուլերում է, երբ աշակերտները դառնում են առավել հետաքրքրված, ներգրավված ուսումնական գործընթացում: Այդ ընթացքում առավել տեսանելի են դառնում սովորողների հատուկ կարողություններն ու համագործակցային հմտությունները:

Նշվեց նաև ուսուցիչների դերի կարևորությունը. իրենց ուղղորդող և ուղեցուցող աշխատանքով նրանք նպաստում են նախագծերի նպատակային և արդյունավետ իրականացմանը: Նախագծային աշխատանքի ղեկավարները,

ներկայացնելով հաշվետվությունները, առանձնացրին երկու առանցքային գործոն՝

- Սովորողների տարիքային առանձնահատկությունների և ֆիզիկական կարողությունների ճշգրիտ հաշվարկումը,
- Եվ նախագծի թեմայի նպատակահարմար ընտրությունը, որն ապահովում է նյութի լիարժեք ընկալում և կիրառություն։

Ալլա Զեյնալյանը կարևորեց այն հանգամանքը, որ նախագծային ուսուցման պայմաններում սովորողները կարողանում են թեմաները խորությամբ ուսումնասիրել՝ վերաճելով տեսական գիտելիքի գործնական կիրառման։ Նա շեշտեց նաև խմբերի կազմման կարևորությունը՝ առաջարկելով համադրել տարբեր կարողություններ ունեցող աշակերտներին, ինչը նպաստում է թիմային աշխատանքի արդյունավետ իրականացմանը և մասնակիցների փոխլրացմանը։

Օլյա Ղուլյանն ընդգծեց, որ նախագծային ուսուցումը նկատելիորեն աշխուժացնում է ուսումնական գործընթացը, բարձրացնում հետաքրքրությունը տարբեր բնագիտական և տեխնոլոգիական ոլորտների նկատմամբ։ Նա նշեց, որ աշակերտներն այս գործընթացում ձեռք են բերում իրական հետազոտական և վերլուծական հմտություններ, զարգացնում նորարարական մտածողություն, ինչպես նաև սովորում են ինքնուրույն լուծել առաջացած խնդիրները։

ՄՄ անդամները նաև կարևորեցին նախագծային աշխատանքի հստակ փուլային կազմակերպումը, որը ներառում է՝

- Թեմայի ընտրություն,
- Նպատակի և հիմնական հարցերի ձևակերպում,
- Տեղեկատվության որոնում և վերլուծություն,
- Աշխատանքի պլանավորում և իրականացում,
- Արդյունքների ներկայացում,
- Ինքնավերլուծություն և հետադարձ կապ։

Նրանք փաստեցին, որ նախագծային գործընթացը միշտ չէ, որ ընթանում է նախապես նախատեսված սցենարով։ Հաճախ առաջանում են անսպասելի իրավիճակներ ու խնդիրներ, որոնց լուծման գործում մեծ է ուսուցիչների աջակցող դերը։ Ուսուցիչները պետք է լինեն՝

- Զգոն,
- Ըմբռնող,
- Ուղղորդող՝

օգնելով աշակերտներին գտնել պատասխաններ հենց նախագծի իրականացման ընթացքում։

Այս դիտարկումները ևս մեկ անգամ հաստատեցին, որ նախագծային ուսուցումը ոչ միայն նպաստում է գիտելիքի խորացմանը, այլև ձևավորում է 21-րդ դարի պահանջներին համապատասխան հմտություններով օժտված աշակերտ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները։

Լսեցին 4. 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը հանդես եկավ 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում հանրակրթության պետական չափորոշիչների (ՀՊՉ) ներդրման գործընթացի գնահատմամբ՝ ընդգծելով, որ դրա արդյունավետ վերահսկողությունն անհրաժեշտ է

իրականացնել համակարգված մոտեցմամբ, որն ընդգրկում է ինչպես ծրագրային, այնպես էլ կազմակերպչական ու գնահատման բաղադրիչները։
Նա կարևորեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները՝ ընդգծելով, որ իրականացված դիտարկումները, դասալսումները և քննարկումները նպաստել են ՀՊՉ-ի կիրառման նկատմամբ ուսուցիչների վստահության և կողմնորոշվածության բարձրացմանը։ Այս միջոցառումները նշանավորեցին իրական աջակցություն՝ հատկապես 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար։
Զեկուցողը նշեց նաև, որ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ՀՊՉ-ի ներդրման ընթացքում արդեն կուտակվել է որոշակի փորձառություն, որն ամրապնդվել է վերապատրաստումների ընթացքում ձեռք բերված գիտելիքներով, հմտություններով և կարողություններով։ Նախապես պլանավորված աշխատանքների արդյունքում հնարավոր եղավ պարզել ինչպես ձեռքբերումները, այնպես էլ առկա բացթողումներն ու խնդիրները, որոնք արձանագրվեցին ուսումնական տարվա ավարտին։
Կատարված աշխատանքների արդյունքում ուսուցիչները կարողացան՝

- Իրականացնել աշակերտակենտրոն մոտեցում,
- Նպաստել գիտելիքների, հմտությունների և արժեքների ամբողջական զարգացմանը,
- Բարելավել դասավանդման և ուսուցման որակը։

Կազմակերպված վերլուծությունները և թիմային քննարկումները զգալիորեն հեշտացրին և արդյունավետ դարձրին ներդրման ամբողջ գործընթացը։ Սա վկայում է այն մասին, որ ՀՊՉ-ի կայուն և նպատակային կիրառումը հնարավոր է միայն՝

- Համակարգված աշխատանքով,
- Հստակ պլանավորմամբ,
- Միջմասնագիտական համագործակցությամբ։

Այս ամբողջական մոտեցումը ստեղծեց նպաստավոր պայմաններ՝ դասավանդման ձևաչափերի արդիականացման և կրթական արդյունքների բարձրացման համար։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների քննարկումները, որոնց ընթացքում վեր հանվեցին մի շարք բովանդակային և կազմակերպչական խնդիրներ։ Այդ քննարկումները նպաստեցին ուսումնական գործընթացի վերլուծությանը և ուղղորդված զարգացմանը։
Նշվեց դպրոցի տնօրենի ժ/պ Սերգեյ Ավանեսյանի կողմից ցուցաբերված խորհրդատվական աջակցությունը, որն էական նշանակություն ունեցավ ինչպես ուսուցիչների մասնագիտական կողմնորոշման, այնպես էլ առօրյա աշխատանքում առաջացող հարցերի լուծման գործում։
Խորհրդատվությունները կրում էին գործնական բնույթ և ուղղված էին ուսուցիչների վերապատրաստմանը, մեթոդական առաջընթացին և նոր չափորոշիչների գիտակից կիրառմանը։
Բացի այդ, շեշտվեց, որ ՕԹՊ-ների (օրացուցային-թեմատիկ պլանների) կազմման ընթացքում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել.

- Դասընթացների ամփոփումներին,
- Եվ գնահատման պահանջներին՝ ըստ Հիմնական պլանի չափորոշիչների (ՀՊՉ)։

Այս մոտեցումը թույլ կտա ապահովել ուսուցման ամբողջական և նպատակային կազմակերպում՝ համապատասխան ժամանակակից կրթական չափանիշներին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին տեղեկատվությունը:

Լսեցին 5. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը մանրամասնորեն ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության իրականացման գործընթացը, արձանագրված բացթողումներն ու թերությունները: Նշվեց, որ որոշ ուսուցիչների մոտ ի հայտ են եկել անհամապատասխանություններ ՕԹՊ-ների (օրացուցային-թեմատիկ պլանների) և ՕԴՊ-ների (օրվա դասի պլանների) միջև, ինչը պահանջում է առավել հետևողական աշխատանք պլանավորման և փաստաթղթային համապատասխանության ապահովման ուղղությամբ:

Բացի այդ, արձանագրվել են տեխնիկական խնդիրներ, ինչի հետևանքով որոշ գնահատականներ չեն պահպանվել համակարգում: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ընդգծում է էլեկտրոնային միջավայրում աշխատելու հմտությունների շարունակական զարգացման անհրաժեշտությունը:

Զեկուցողի խոսքով՝ որոշ ուսուցիչների համար նորություն էր նոր չափորոշչային դասարաններում նախագծային աշխատանքների մատենավարության կարգը: Այնուամենայնիվ, գործընթացը իրականացվել է ճշգրտորեն և կանոնակարգված, առանց էական շեղումների, ինչը վկայում է ուսուցիչների պատասխանատվության և ներգրավվածության բարձր մակարդակի մասին:

Ամփոփելով մատենավարության ստուգման արդյունքները՝ մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունցը նշեց, որ ընթացիկ տարում ուսուցիչների կողմից արձանագրված թերություններն էապես նվազել են՝ նախորդ տարիների համեմատ: Սա վկայում է ոչ միայն աշխատանքի որակի բարելավման, այլև էլեկտրոնային համակարգի հետ աշխատանքում ուսուցիչների հմտությունների աճի մասին:

Այս գործընթացը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ կանոնավոր դիտարկումները, խորհրդատվությունները և մեթոդական աջակցությունը դրական ազդեցություն են ունենում կրթական փաստաթղթերի պատշաճ իրականացման վրա:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը

Ընդգծվեց, որ մատենավարության գործընթացում առանցքային նշանակություն ունի յուրաքանչյուր ուսուցչի անհատական և պատասխանատու մոտեցումը: Որպես կրթական փաստաթղթերի կառավարման հիմք՝ մատենավարությունը պահանջում է ոչ միայն տեխնիկական ճշգրտություն, այլև գիտակցված վերաբերմունք՝ յուրաքանչյուր գրառման, գնահատման և դասապլանային տվյալների նկատմամբ:

Նշվեց, որ ընթացիկ ստուգումների արդյունքում որոշ թերություններ դեռևս արձանագրվում են, ինչն արձագանքում է հետևողականության և կարգապահության պահպանման անհրաժեշտությանը: Այս առումով հետևողական վերահսկողությունը դասավանդման որակի պահպանման և բարելավման կարևոր գործիք է:

- Առկա խնդիրները պետք է բացահայտվեն ժամանակին,
- Քննարկվեն մեթոդմիավորման և վարչական կազմի ներսում,
- Եվ ենթարկվեն վերանայման ու անհրաժեշտության դեպքում՝ ուղղման:

Այս կանխարգելիչ մոտեցումը թույլ կտա խուսափել խնդիրների խորացումից և նպաստել մատենավարական փաստաթղթերի ավելի որակյալ և նպատակային կառավարմանը՝ ի նպաստ կրթական գործընթացի շարունակական բարելավման:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը:

Լսեցին 6. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԿԱՊԿՈՒ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) աշակերտների Անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) կազմման և համապատասխան դիտարկման թերթիկների լրացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն:

Նա ընդգծեց, որ աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են հաստատված կարգի և պահանջների համաձայն, ապահովվել է ձևաթղթերի ճշգրիտ, ամբողջական և համակարգված լրացումը:

Շեշտվեց, որ ԱՈՒՊ-ների ձևակերպման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքներին, ուսումնական առաջադիմությանը և կրթական հնարավորություններին: Այս մոտեցման նպատակն էր ապահովել առավել արդյունավետ, անհատականացված և նպատակային ուսուցում, ինչը թույլ է տալիս ոչ միայն կատարել պահանջվող փաստաթղթային աշխատանքը, այլև իրականացնել աշակերտակենտրոն և ներառական կրթություն:

Այս գործընթացը վկայում է դպրոցի հետևողական աշխատանքի մասին՝ ուղղված ԿԱՊԿՈՒ աշակերտների լիարժեք ներգրավմանը կրթական միջավայրում և նրանց կրթական հնարավորությունների առավելագույն իրացմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների կազմման դերը՝ նշելով, որ այն հնարավորություն է տալիս առավել խորությամբ բացահայտելու յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքները, ուժեղ կողմերն ու զարգացման ոլորտները:

Նրանք ընդգծեցին, որ այս գործընթացը պետք է ծառայի ոչ թե որպես ձևական ընթացակարգ, այլ դառնա իրական աջակցման գործիք, որն ուղղված է՝

- Ուսուցման բովանդակության հարմարեցմանը,
- Մեթոդների և ձևերի ընտրությանը՝ ըստ աշակերտի կարողությունների,
- Եվ կրթական հավասար հնարավորությունների ստեղծմանը:

ԱՈՒՊ-ների ճշգրիտ կազմումը և կիրառումը, նրանց կարծիքով, հնարավոր է միայն՝

- անհատական մոտեցման,
- համագործակցային միջավայրի,
- և շարունակական դիտարկումների շնորհիվ:

Այս մոտեցումը ոչ միայն նպաստում է աշակերտակենտրոն ուսուցման ամրապնդմանը, այլ նաև ամրագրում է ներառական կրթության իրական արժեքն ու նշանակությունը կրթական համակարգում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունը:

Լսեցին 7. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբերի հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում՝ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին, դպրոցում կազմակերպվել

են երկարօրյա ուսուցման խմբակներ 2-3-րդ և 5-8-րդ դասարանների աշակերտների համար։ Աշակերտների ընդգրկումը երկարօրյա խմբակներում իրականացվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն։

Ըստ սահմանված կարգի՝

- 2-3-րդ դասարաններից ընդգրկվել են այն աշակերտները, ովքեր առաջադիմության բնութագրող գնահատման արդյունքում ցուցաբերել են ցածր առաջադիմություն,
- 5-8-րդ դասարաններից՝ նրանք, ովքեր երկու անգամ անընդմեջ ստացել են «1»-ից «3» գնահատական։

Զեկուցողը հավելեց, որ իրականացվել են պարբերական դիտարկումներ և ներքին գնահատումներ, որոնց արդյունքները գնահատվում են զոհացուցիչ։

Բացի այդ, ներկայացվեց նաև 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ փետրվարից մայիս ամիսներին իրականացված աշխատանքների ամփոփ պատկերը։ Հատկապես կարևորվեցին.

- Դասապրոցեսի կազմակերպման պատշաճությունը,
- Խմբակների արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերը,
- Ուսուցիչների կողմից ներկայացված հաշվետվությունների նշանակությունը, որոնց միջոցով հնարավոր եղավ վերլուծել իրականացված աշխատանքներն ու արձանագրել տարվա ընդհանուր արդյունքները։

Զեկուցողը կարևորեց, որ երկարօրյա ուսուցման խմբակները նպաստել են թե՛ սովորողների առաջադիմության բարելավմանը, թե՛ նրանց ներառականության մակարդակի բարձրացմանը։

Արտահայտվեցին՝ Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները

Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները՝ մանրամասն անդրադառնալով ինչպես իրականացված աշխատանքներին, այնպես էլ գործընթացի ընթացքում առաջացած խնդիրներին, ձեռքբերումներին և արձանագրված արդյունքներին։ Հատուկ ուշադրություն դարձվեց ուսումնական առաջադիմության վրա, ընդգծվեցին նաև այն գործոնները, որոնք նպաստել կամ խոչընդոտել են խմբակների արդյունավետ գործունեությանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №12

«27» հունիսի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Մարինե Բաբայան
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով համակարգող Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, հումանիտար ուղղվածությամբ խմբակների ղեկավարներ, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. 2024-2025 ուսումնական տարվա 9-րդ դասարաններում ավարտական քննությունների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման առարկաների ուսուցիչների կողմից իրականացված բաց դասերի, դաս միջոցառումների, վիկտորինաների կատարման արդյունքների քննարկում:
(զեկուցողներ՝ Ա. Առստամյան, Ա. Դաջունց)
5. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
6. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքների կատարման արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
7. 2024-2025 ուսումնական տարում իրականացված դասալսումների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
8. 2024-2025 ուսումնական տարվա նախնական դասաբաշխում:
(զեկուցողներ՝ Ա. Առստամյան, Ա. Դաջունց)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգի հաստատման հարցը:

(Զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:

(Զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. 2024-2025 ուսումնական տարվա 9-րդ դասարաններում ավարտական քննությունների արդյունքների ամփոփման հարցը:

(Զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ավարտական քննությունների արդյունքները «Մաթեմատիկա», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաներից: Նրա խոսքով՝ ընդհանուր առմամբ քննությունների արդյունքները կարելի է գնահատել գոհացուցիչ. աշակերտների զգալի մասը ցուցաբերել է բավարար գիտելիքներ և կարողություններ, կարողացել է հաղթահարել սահմանված նվազագույն շեմը, իսկ որոշ սովորողների դեպքում արձանագրվել են նաև բարձր ցուցանիշներ՝ վկայելով համառ ու հետևողական աշխատանքի մասին:

Միևնույն ժամանակ, զեկուցողն ընդգծեց, որ դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են համալիր և համակարգված մոտեցում: Մասնավորապես, կարևոր է շարունակաբար աշխատել ոչ միայն առարկայական գիտելիքների ամրապնդման, այլև աշակերտների տրամաբանական և վերլուծական մտածողության զարգացման ուղղությամբ: Նա կարևորեց քննությունների ձևաչափի նկատմամբ ուշադրությունը, դրանց առավել արդյունավետ կազմակերպման և գնահատման մեխանիզմների վերանայման անհրաժեշտությունը: Հատկապես կարևորվեց աշակերտների մոտ ինքնուրույն աշխատանքի, քննությանը նախապատրաստվելու մշակույթի ձևավորումը, ինչպես նաև գիտակցական մոտեցման խթանումը:

Զեկուցողն առաջարկեց առաջիկա ուսումնական տարում պլանավորել նպատակային միջոցառումներ՝ ուղղված ոչ միայն առարկայական առաջադիմության բարելավմանը, այլև սովորողների ընդհանուր ինտելեկտուալ և անձնային ներուժի զարգացմանը: Նա վստահություն հայտնեց, որ շարունակական հետևողական աշխատանքի և ճիշտ կազմակերպված մոտեցումների դեպքում հնարավոր է հասնել առավել բարձր ու կայուն արդյունքների:

Արտահայտվեցին՝ Ա. Զեյնալյանը, Հ. Օհանյանը

Քննարկման ընթացքում Ալլա Զեյնալյանը կարևորեց «Մաթեմատիկա» առարկայի դերը մնացած բնագիտական առարկաների ուսուցման և ընկալման գործընթացում: Նրա խոսքով՝ մաթեմատիկական գիտելիքները և հմտությունները էական նշանակություն ունեն ոչ միայն առարկայական առաջադիմության, այլև հատկապես խնդիրների լուծման և վերլուծական

մտածողության զարգացման համար։ Զեյնալյանը ընդգծեց, որ մաթեմատիկայի նկատմամբ խորքային մոտեցումը և շարունակական աշխատանքը նպաստում են սովորողների հաջողությանը նաև «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և այլ բնագիտական առարկաների շրջանակներում։

Հայկ Օհանյանը ներկայացրեց «Ֆիզիկա» առարկայի ավարտական քննությունների արդյունքները՝ նշելով, որ ընդհանուր գնահատականները բավարար մակարդակի վրա չեն։ Նրա խոսքով՝ անհրաժեշտ է ուժեղացնել աշակերտների նախապատրաստական աշխատանքները, վերանայել ուսումնառության կազմակերպման եղանակները և առավել շեշտադրել փորձնական աշխատանքների և գործնական դասերի կարևորությունը, ինչը թույլ կտա բարելավել թե՛ տեսական գիտելիքները, թե՛ դրանց կիրառման կարողությունները։

Օհանյանը նաև կարևորեց աշակերտների մոտ հետաքրքրության և մոտիվացիայի բարձրացումը՝ նշելով, որ առանց ներգրավվածության և գիտակցված մասնակցության դժվար է հասնել ակնկալվող առաջադիմությանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների մասին տեղեկատվությունը (կցվում է ամփոփագիրը)։

Լսեցին 4. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման առարկաների ուսուցիչների կողմից իրականացված բաց դասերի, դաս միջոցառումների, վիկտորինաների կատարման արդյունքների քննարկում։

(զեկուցողներ՝ Ա. Առստամյան, Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական առարկաների շրջանակում պլանավորված բաց դասերն ու միջոցառումները հիմնականում հաջողությամբ իրականացվել են։ Չնայած որոշ դեպքերում ծրագրային ժամկետներում կատարվել են փոփոխություններ՝ անկախ պատճառներից, կազմակերպված աշխատանքների մեծ մասը իրականացվել է բարձր մակարդակով, պահելով ծրագրային պահանջները և ուսումնական գործընթացի որակը։

Նա ընդգծեց, որ ինչպես բաց դասերը, այնպես էլ տարբեր առարկայական միջոցառումները նպաստել են սովորողների հետաքրքրության ու ներգրավվածության աճին։ Սովորողները մեծ ոգևորությամբ ու ակտիվությամբ են մասնակցել դրանց՝ ցուցաբերելով ոչ միայն տեսական պատրաստվածություն, այլև գործնական կարողություններ և նախաձեռնողականություն։ Այդ միջոցառումները ստեղծել են բաց և ստեղծագործ միջավայր, որտեղ սովորողները հնարավորություն են ունեցել ազատ արտահայտելու իրենց մտքերը, փորձելու իրենց ուժերը և խորացնելու իրենց գիտելիքները։

Զեկուցողն ընդգծեց, որ նման ձևաչափի աշխատանքները կարևոր նախադրյալ են սովորողների ինքնավստահության, տրամաբանական մտածողության և համագործակցության կարողությունների զարգացման համար։ Նա անհրաժեշտ համարեց շարունակել նմանատիպ միջոցառումների պլանավորումը և կատարելագործումը՝ ապահովելով որակյալ կրթական միջավայր և նպաստելով սովորողների անձնային ու ակադեմիական աճին։

Արտահայտվեցին՝ Ա. Զեյնալյանը, Հ. Ալավերդյանը։

Արտահայտվողները կարևորեցին բաց դասերի արդյունավետ կազմակերպման նախապայմանները՝ նշելով, որ դրանք պահանջում են մանրակրկիտ նախապատրաստական աշխատանքներ։ Նրանց խոսքով՝ բաց դասերը պետք է լինեն ոչ միայն ծրագրային նյութի շրջանակում, այլև հագեցած նոր և արդյունավետ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են ինտերակտիվ,

հետազոտական և ստեղծագործական մոտեցումները։ Բացի այդ, կարևոր է, որ դասերը ուղեկցվեն համապատասխան ցուցադրական նյութերով, վիզուալ օրինակներով և գործնական աշխատանքներով, ինչը կդարձնի գործընթացը առավել հետաքրքիր և ընկալելի։

Նշվեց, որ նմանատիպ դասերը չեն դիտարկվում միայն որպես ուսուցիչների պատասխանատվություն. սովորողներն իրենք ևս ակտիվ մասնակցություն են ցուցաբերում այդ միջոցառումների կազմակերպման և ընթացքի մեջ։ Նրանք ներգրավվում են ինչպես նյութերի պատրաստման, այնպես էլ ներկայացման գործընթացում, ինչը ոչ միայն ամրապնդում է իրենց գիտելիքները, այլև զարգացնում է ինքնուրույնության, նախաձեռնողականության և համագործակցության հմտությունները։

Արտահայտվողները ընդգծեցին, որ միայն այս ձևով հնարավոր է ապահովել բաց դասերի իրական արդյունավետությունը՝ դրանք վերածելով սովորողների ակտիվ մասնակցությամբ, գիտելիքների խորացմամբ և ընդհանուր ուսումնական միջավայրի աշխուժացմամբ ուղեկցվող միջոցառումների։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների մասին զեկուցումը։

Լսեցին 5. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկման հարցը։

(Զեկուցող՝ Ա. Դաջունց)

Մեթոդմիավորման նախագահը համապարփակ ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների ընդհանուր պատկերը՝ անդրադառնալով ինչպես արձանագրված հաջողություններին, այնպես էլ առկա բացթողումներին։ Նա մանրամասն ներկայացրեց նաև ուսումնական տարվա սկզբում հաստատված ժամանակացույցի հիման վրա իրականացված և տարբեր պատճառներով չիրականացված աշխատանքների վերլուծությունը։

Մեթոդմիավորման անդամները հանդես եկան իրենց անհատական հաշվետվություններով, ներկայացրին ուսումնական տարվա ընթացքում իրականացված գործունեության արդյունքները, ձեռքբերումներն ու խնդիրները։ Նրանք ամփոփեցին կատարած աշխատանքի հիմնական ուղղությունները՝ շեշտադրելով թե՛ առարկայական ուսուցման որակի բարելավման, թե՛ դասապրոցեսի ակտիվացմանն ուղղված նախաձեռնությունները։

Քննարկման ընթացքում մասնավորապես անդրադարձ կատարվեց նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքներին։ Ուսուցիչները ներկայացրին այդ աշակերտների հետ իրականացված անհատականացված և նպատակային աշխատանքների գործընթացը, ցուցաբերած մոտեցումները և գրանցված արդյունքները։ Նշվեց, որ այս ուղղությամբ թեև կատարվել է զգալի աշխատանք, սակայն անհրաժեշտ է շարունակել աշակերտների կարիքներին առավել համահունչ կրթական միջավայրի ապահովմանն ուղղված քայլերը։

Վերջում անդամները համատեղ վերլուծեցին առաջացած խնդիրները, քննարկեցին դրանց լուծման հնարավոր տարբերակներն ու զարգացման նոր ուղղությունները, ընդգծելով համագործակցության և հետևողական աշխատանքի կարևորությունը ուսումնական գործընթացի շարունակական կատարելագործման գործում։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները բարձր գնահատեցին մեթոդմիավորման նիստի ընթացքում կազմակերպված ծավալուն և նպատակային քննարկումները, որոնք նպաստեցին ուսումնական տարվա արդյունքների համակողմանի

վերլուծությանը: Նրանք կարևորեցին, որ նիստի ձևաչափը հնարավորություն տվեց ոչ միայն լսելու անհատական հաշվետվությունները, այլ նաև համատեղորեն վերլուծելու դրանց բովանդակությունը, ընդգծելու թե՛ հաջողությունները, թե՛ առկա բացթողումներն ու բարելավման ուղիները:
Առանձնահատուկ կարևորվեց նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքների վերլուծությունը: Նշվեց, որ այս գործընթացում առանցքային նշանակություն ունի ուսուցչի և ուսուցչի օգնականի միջև հաստատված փոխադարձ կապն ու համագործակցությունը, ինչը նպաստում է այդ աշակերտների կրթական ներառմանը, անհատական կարիքների առավել լիարժեք հաշվառմանը և կրթության արդյունավետ կազմակերպմանը:
Քննարկման ընթացքում արձանագրվեցին նաև տարվա ընթացքում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում ի հայտ եկած մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ դասապրոցեսում անհատական մոտեցման ապահովման դժվարությունները, մասնագիտական ռեսուրսների և մեթոդական նյութերի պակասը, ինչպես նաև երբեմն ծնողների և ընտանիքների կողմից համագործակցության ցածր մակարդակը: Նշվեց, որ անհրաժեշտ է շարունակել հետևողական աշխատանքը՝ ինչպես ուսուցիչների վերապատրաստման, այնպես էլ ներառական կրթության համար անհրաժեշտ պայմանների բարելավման ուղղությամբ:
Արտահայտվողները համակարծիք էին, որ նման քննարկումները նպաստում են խնդիրների բացահայտմանը և դրանց լուծման արդյունավետ մեխանիզմների մշակմանը, ինչը դրական ազդեցություն կթողնի ուսումնական գործընթացի որակի և բոլոր աշակերտների առաջադիմության վրա:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը:

Լսեցին 6. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքների կատարման արդյունքների քննարկման մասին հարցը:

(Զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական մասնախմբի արտադասարանական խմբակների կատարած աշխատանքների ամփոփ պատկերը: Նա ընդգծեց, որ խմբակների գործունեությունը կազմակերպվել է հաստատված պլանների և ծրագրերի համաձայն՝ նպատակ ունենալով խորացնել սովորողների հետաքրքրությունը բնագիտական և մաթեմատիկական առարկաների նկատմամբ, զարգացնել նրանց ստեղծագործական և փորձարարական հմտությունները:
Զեկուցողի խոսքով՝ խմբակների աշխատանքները եղել են բազմաբովանդակ, ներառել են ինչպես տեսական, այնպես էլ գործնական բաղադրիչներ, որոնք խթանել են սովորողների ակտիվությունը և գիտելիքների ամրապնդումը: Այս ուսումնական տարում խմբակների աշխատանքների ամբողջ ընթացքը արձանագրված է էլեկտրոնային մատյաններում, որոնք պատշաճ կերպով լրացված և ստուգված են: Այդ ձևաչափը հնարավորություն է տվել ավելի հստակ վերահսկելու խմբակների գործունեության ընթացքը և ապահովել տեղեկատվության թափանցիկությունը:
Ներկայացվել են նաև խմբակների աշխատանքների պաշտոնական հաշվետվությունները, որտեղ ամփոփված են կազմակերպված միջոցառումները, իրականացված նախագծերը, ստացված արդյունքները, ինչպես նաև առկա դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները:
Զեկուցողը կարևորեց, որ նման համակարգված և փաստագրական մոտեցումը թույլ է տալիս գնահատել կատարված աշխատանքը, վերլուծել արդյունքները և

պլանավորել հետագա քայլերը խմբակների արդյունավետության շարունակական բարձրացման համար։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Առստամյանը

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց բնագիտամաթեմատիկական մասնախմբի շրջանակում գործող արտադասարանական խմբակների գործունեության արդյունքները՝ նշելով, որ դրանք էական ներդրում են ունենում սովորողների կրթական առաջընթացի և հետաքրքրությունների ձևավորման գործընթացում։ Միաժամանակ նա շեշտեց, որ անհրաժեշտ է ոչ միայն գնահատել կատարված աշխատանքը, այլև խորությամբ վերլուծել խմբակների գործունեության ընթացքը, առանձնացնել առաջացած խնդիրները և մշակել մեխանիզմներ, որպեսզի հետագա ուսումնական տարիներին այդ խնդիրները չկրկնվեն։

Առստամյանը ևս անդրադարձավ իր և Գևորգյանի կողմից ուսումնական տարվա ընթացքում իրականացված դիտարկումներին, որոնք ծավալվել են տարբեր խմբակների գործունեության ընթացքի ժամանակ։ Նա նշեց, որ ընդհանուր առմամբ արձանագրված արդյունքները կարելի է գնահատել գոհացուցիչ, սակայն դիտարկումների արդյունքում արձանագրվել են նաև խմբակներ, որոնք պատշաճ կերպով չեն իրականացվել՝ թե՛ կազմակերպման, թե՛ աշակերտների ներգրավվածության տեսանկյունից։ Առստամյանը կարևորեց, որ այդ խնդիրները պետք է պարտադիր հաշվի առնվեն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում խմբակների ժամերի բաշխման և պլանավորման ժամանակ։

Նա նաև ընդգծեց, որ որոշ խմբակներում աշակերտների մասնակցության և հետաքրքրվածության մակարդակը նկատելիորեն բարձր է, քան մյուսներում, ինչը վկայում է թե՛ թեմատիկայի նկատմամբ սովորողների հետաքրքրության տարբերության, թե՛ խմբակների կազմակերպիչների մոտեցման մասին։ Այս առումով կարևոր է վերլուծել հաջողված փորձը, տարածել լավագույն գործելակերպերը և համապատասխան փոփոխություններ իրականացնել այնտեղ, որտեղ անհրաժեշտ է ավելի արդյունավետ կազմակերպում և աշակերտների ակտիվ ներգրավում։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը։

Լսեցին 7. 2024-2025 ուսումնական տարում իրականացված դասալսումների ամփոփման հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական մասնախմբում իրականացված դասալսումներն ու դրանց արդյունքների քննարկումները։ Նրա խոսքով՝ դասալսումները կարևոր գործիք են ուսուցման որակի բարելավման, նորարարական մեթոդների կիրառման գնահատման և ուսուցիչների մասնագիտական աջակցության համար։

Նշվեց, որ հաշվի առնելով նոր ՀՊՉ-ներով պայմանավորված փոփոխությունները, դասալսումները և դրանց արդյունքների վերլուծությունը պետք է առավել բազմակողմանի, համապարփակ և խորքային լինեն՝ ներառելով ոչ միայն դասի բովանդակային կողմը, այլև ուսումնառության կազմակերպման, աշակերտների ներգրավման և ուսուցման մեթոդական կողմերը։

Բոլոր իրականացված դասալսումները պատշաճ կերպով ամփոփված են արձանագրությունների մեջ, իսկ դրանց արդյունքները ներկայացվել են դպրոցի տնօրինությանը՝ հետագա աշխատանքների պլանավորման և ուսուցման որակի բարելավման նպատակով։

Զեկուցողը առանձնահատուկ նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում դասալսումներ իրականացվել են նաև «Դասավանդիր Հայաստան» ծրագրի շրջանակներում ներգրավված մաթեմատիկայի ուսուցիչների մոտ: Դասալսումների ընթացքում դիտարկվել են ինչպես նորեկ ուսուցիչների աշխատանքային մոտեցումները, այնպես էլ նրանց կողմից կիրառվող մեթոդներն ու աշակերտների հետ իրականացվող աշխատանքները: Քննարկումների արդյունքում տրվել են կառուցողական խորհուրդներ և առաջարկություններ՝ նրանց մասնագիտական աճին աջակցելու և ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Զեկուցողը կարևորեց նմանատիպ շարունակական գործընթացների կազմակերպումը, որոնք հնարավորություն են տալիս ժամանակին բացահայտել խնդիրները, ամրապնդել դրական փորձը և նպաստել ուսումնական գործընթացի որակի բարելավմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները կարևորեցին դասալսումների ընթացքում ճիշտ, օբյեկտիվ և կառուցողական խորհրդատվության տրամադրումը, ինչպես նաև ուսուցիչների միջև փորձի փոխանակման գործընթացը: Նրանց դիտարկմամբ՝ դասալսումները պետք է դիտարկվեն ոչ թե որպես վերահսկողական, այլ որպես աջակցող և զարգացնող գործիք, որի նպատակն է օգնել ուսուցիչներին բացահայտել ինչպես իրենց ուժեղ կողմերը, այնպես էլ զարգացման ենթակա ոլորտները:

Նշվեց, որ դասալսումների արդյունավետությունը կախված է նրանից, թե որքան անկողմնակալ և պրոֆեսիոնալ է տրվում հետադարձ կապը, ինչպիսի մթնոլորտում է իրականացվում քննարկումը, և որքանով է խրախուսվում փորձի փոխանակումը: Արտահայտվողները կարևորեցին նաև, որ փորձառու և երիտասարդ ուսուցիչների համագործակցությունը պետք է լինի շարունակական և նպատակային՝ ապահովելով մեթոդական գիտելիքների փոխանցում, նորարարական մոտեցումների տարածում և ընդհանուր ուսումնական միջավայրի բարելավում:

Միաձայն նշվեց, որ միայն անկեղծ, կառուցողական և փոխադարձ հարգանքի վրա հիմնված քննարկումները կարող են նպաստել իրական որակական փոփոխությունների և ուսուցման բարձր արդյունքների ապահովմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 8. 2024-2025 ուսումնական տարվա նախնական դասաբաշխման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ա. Առստամյան, Ա. Դաջունց)

Զեկուցողները ներկայացրին 2025-2026 ուսումնական տարում նախատեսվող բոլոր փոփոխությունները, որոնք կապված են 4-րդ և 9-րդ դասարաններում նոր ՀՊՉ-ների ներդրման հետ: Նրանք ընդգծեցին, որ այս փոփոխությունները կանդրադառնան ինչպես ուսումնական ծրագրերի բովանդակությանը, այնպես էլ գնահատման չափանիշներին և ուսումնառության կազմակերպման մեթոդներին:

Նշվեց, որ ներկայումս դեռ կան որոշ անորոշություններ և հստակեցումներ, ուստի մանրամասն և հստակ տեղեկատվություն կարելի կլինի ստանալ օգոստոսյան խորհրդակցությունների ավարտից հետո՝ կրթության պատասխանատուների և մասնագետների հետ իրականացվելիք հանդիպումներից հետո:

Զեկուցողները կարևորեցին, որ այս փուլում կարևոր է պատրաստվել առաջիկա փոփոխություններին՝ կազմակերպելով համապատասխան վերապատրաստումներ ուսուցիչների համար և համակարգելով

ուսումնառության գործընթացը՝ ապահովելու փոխադարձ հասկացողություն և որակյալ անցում նոր չափորոշիչներին։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները ընդգծեցին, որ 9-րդ դասարանում սպասվող փոփոխությունները, հատկապես բնագիտամաթեմատիկական առարկաների առարկայական նոր մոտեցումները, պետք է ուշադրությամբ հաշվի առնվեն ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակ։ Նրանք շեշտեցին, որ այս փոփոխությունները կնպաստեն ուսուցման որակի բարձրացմանը և ավելի հարմարվող ուսումնական ծրագրերի մշակմանը։

Արփինե Մարտիրոսյանը կարևորեց 2024-2025 ուսումնական տարվա փորձի մշակումը և կիրառելի դարձնելը՝ նշելով, որ անհրաժեշտ է կատարել խելամիտ շտկումներ և փոփոխություններ՝ հիմնված ուսումնառության ընթացքից ձեռք բերված տեղեկություններուն և իրական պահանջներին։ Նա առաջարկեց պարբերաբար գնահատել փոփոխությունների ազդեցությունը և անհատականացված մոտեցումներ որդեգրել՝ օպտիմալացնելու ուսումնական գործընթացը և ապահովելու աշակերտների արդյունավետ ներգրավվածությունը։

Արտահայտվողները ընդհանուր առմամբ պայմանավորվեցին, որ անցած ուսումնական տարվա ձեռքբերումներն ու դասերը պետք է ծառայեն որպես հուսալի հիմք նոր ուսումնական տարին առավել կազմակերպված և արդյունավետ անցկացնելու համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա նախնական դասաբաշխումը (կցվում է)։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման

2024-2025 ուսումնական տարվա ընթացքում *Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորումը* գումարել է *12 նիստ*, որոնց համար կազմվել է *12 արձանագրություն։*

Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	22.08.2024թ	13
2	2	23.09.2024թ	5
3	3	21.10.2024թ	8
4	4	25.11.2024թ	7
5	5	23.12.2024թ	13
6	6	27.01.2025թ	9
7	7	25.02.2025թ	6
8	8	24.03.2025թ	6
9	9	28.04.2025թ	8
10	10	13.05.2025թ	2 (արտահերթ)
11	11	27.05.2025թ	7
12	12	27.06.2025թ	8

Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման սույն արձանագրությունների մատյանը կազմված է *69* էջից։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«27» հունիսի 2025թ.